Azg
armenian daily

Յունիս 2 Չորեքշաբթի 1993

ՈՒՍՄԿՈՒԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
9 տարի, թիվ 102 (353)
գինը 10 ռ.
դասիչ 69149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Գերմանիա

Թուրք ցուցարարների բախում գերմանացի ոստիկանների հետ

3-րդ օրն է գերմանական Սոլինգեն քաղաքի փողոցներում բախումներ են տեղի ունենում զազազած թուրքերի եւ ոստիկանության միջեւ: Պատճառը շաբաթ օրը նույն քաղաքում գերմանացի մի դպրոցում հարձակումն է թուրք 2 կանանց եւ 3 աղջիկների վրա, որի հետեւանքով մահացել էին 5-ն էլ: Թուրք ցուցարարները, որոնք խիստ անհանգստացած են նաեւ օտարերկրացիների դեմ վերջին շարժումներից եւ գերմանական խորհրդարանի որոշումներից, ըստ որոնց սահմանափակումներ են դրվում օտարերկրացիների Գերմանիա ներգաղթի վրա: Թուրք ցուցարարները երեկ շարունակեցին վանդալիզմի արարքներ գործել քաղաքում, ջարդուփշուր անելով խանութների ցուցափեղկերը եւ կողոպտելով դրանք: ■

Երեւան

Սենատորները կզեկուցեն պետքարտուղար Քրիստոֆերին

Երեւանում գտնվող ամերիկյան սենատորներ Պոլ Սայմոնը, Հարրի Ռիդը եւ Հարրի Բրաունը իրենց երկօրյա այցի ընթացքում հանդիպումներ ունեցան ՀՀ նախագահի, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ, եղան Գյումրիում, Հայաստանի ամերիկյան հանձնաժողովում եւ երեկ երեկոյան «Արմենիա» հյուրանոցում անցկացրին մամուլի ասուլիս: Սենատորները հայտնեցին, թե իրենք ծանոթացան Հայաստանում տիրող իրավիճակին եւ պատրաստվում են իրենց ուղեւորության արդյունքների մասին զեկուցել պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերին: Նրանց կարծիքով, Հայաստանն ունի հսկայական ներուժ, եւ միայն խաղաղության հաստատումից հետո հնարավորություն կստեղծվի այն լիարժեք օգտագործել: Պոլ Սայմոնի անձով, այնտեղ հանդիպարան կողմերը գտնվում են խաղաղության ընթացքն ապագա տանելու կետին: Նրա կարծիքով, Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովուրդները չեն բաժնի, որովհետեւ այդ հնարավորությունը շրջանցի իրենց, զգալով նաեւ բարգավաճման հնարավորությունը: Պոլ Սայմոնը նշեց, թե թեմը եւ մեծաքանակ Դասը կոնդրեսում մեծ աջակցություն են ստանում հայերենի մասին: Սենատոր Ռիդ Սայմոնը, Հարրի Ռիդը եւ Հարրի Բրաունը հայտնեցին, թե իրենք ԱՄՆ-ում հետաքրքրի դեսպանի հետ հանդիպելու եւ կարծիքներ փոխանակելու: Պոլ Սայմոնի կարծիքով, Հայաստանի ամերիկյան դեսպանությունը հնարավորություն կստեղծ

Պաշտոնական

Հանդիպումներ Լոնդոնում

Լոնդոնում պաշտոնական այցով գտնվող ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանն ու պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը մի շարք հանդիպումներ ունեցան բրիտանական գործարար շրջանների, խոշոր ֆիրմաների ղեկավարների հետ:

«Բրիթիշ պետրոլեում» ընկերությունում քննարկվեց Հայաստանի էներգետիկ ծրագրին, մասնավորապես նավթամթերքի փոխադրումը կազմակերպելու գործում ընկերության մասնակցության հարցը:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ավտոմոբիլաշինության հարցերից է «Բրիթիշ էյրվեյզ»-ը, որը Հայաստանի հետ գործարար կապեր հաստատելու որոշակի հետաքրքրություն ունի: Ընկերության ղեկավարության հետ հանդիպման ժամանակ վարչապետը ներկայացրեց համագործակցության հնարավոր ոլորտները՝ էլեկտրոնիկա, տարածաշրջանային ավիացիա, գիտատեխնիկական աշխատուժ, նուրբ տեխնոլոգիաներ, շինարարություն եւ շինանյութերի արդյունաբերություն եւ այլն:

Բրիտանական ազգային բանկի նախագահի հետ վարչապետը քննարկեց բանկային համակարգի բարեփոխումների, վարկային էմիսիայի խնդիրներ, արժեզրկման հետագա խորացումը կանխելու եւ այդ բնագավառներում համագործակցելու հնարավորություններն ու ձեւերը:

Աշխարհի առաջատար հանքարդյունաբերական ընկերություններից մեկի՝ RTZ-ի հետ փոխշահավետ հարաբերությունների ձեւավորման վերաբերյալ Հայաստանի վարչապետի նախնական բանակցություններում շոշափվեց պղնձի եւ մոլիբդենի հանքավայրերի շահագործման, խտանյութի եւ մաքուր մետաղի ստացման ամբողջական ցիկլի ապահովման նպատակով անհրաժեշտ կարողությունների կազմակերպման ուղղությամբ ջանքերի համատեղման հարցը:

Բոլոր քննարկումների արդյունքում ձեւ բերվեց փոխշահեստների մակարդակով շոշափված հարցերի ուսումնասիրության պայմանավորվածություն՝ հետագա փոխհարաբերությունները կոնկրետացնելու եւ գործնական հիմքերի վրա դնելու համար:

Այցի ընթացքում վարչապետ Հրանտ Բագրատյանը հանդիպումներ ունեցավ լոնդոնահայ համայնքի, հայ գործարարների եւ կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Վարչապետը առանձնազրույցներ ունեցավ ռամկավար-ազատական, դաշնակցական եւ հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչների հետ իրենց խնդրանքով, որոնց ընթացքում շեշտվեց միասնաբար գործելու, անկախ պետականության հաստատմանը, հայրենիքին զորավիգ լինելու նպատակով կուսակցությունների եւ իշխանությունների ջանքերի համատեղման անհրաժեշտությունը:

Հրանտ Բագրատյանը հանդիպեց Մարգրետ Թեթչերի հետ

ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, որ պաշտոնական այցով գտնվում է Լոնդոնում, մայիսի 28-ին հանդիպում ունեցավ Մարգրետ Թեթչերի հետ նրա հրավերով: Հայաստանի վարչապետը տիկին Թեթչերին տեղեկացրեց էներգետիկ ծրագրի իրականացման մանրամասներին եւ դժվարություններին: Արծարծվեց նաեւ հայկական առոմակայանի վերագործարկման խնդիրը, որի նպատակով տիկին Թեթչերն առանձնակի հետաքրքրություն դրսեւորեց: Հանգամանորեն քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման ուղիները: Տիկին Թեթչերը մանրամասնորեն տեղեկացավ Հայաստանի ցիմբրոնճանն ու մոտեցումներին: Եռակողմ նախաձեռնության նպատակով Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների տարբեր կարծիքների առնչությամբ նախկին վարչապետն այն միտքը հայտնեց, որ համաառորեն ու համբերատարությամբ հարկ է շարունակել իսկամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ գործադրվող ջանքերը, օգտագործելով ամենաանբան իսկ հնարավորությունը:

Տիկին Թեթչերը, որը քաղաքական ասպարեզում շարունակում է ակտիվ գործունեությունը, պատրաստակամություն հայտնեց իր նոթասը բերել շրջանում խաղաղության վերահաստատման գործին: ■

Քաղաքական

Ս-ԴՀԿ. ՄԵՐ ՄԻԱԿ ՆԵՑՈՒԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՆ Է

Թեեւ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը Հայաստանում վերահաստատվել է դեռեւս 1990 թվականի օգոստոսին, այնուամենայնիվ երեւի սխալված չենք լինի, եթե ասենք, որ նա իր լիարժեք գործունեությունը հայրենիքում սկսեց ընդամենը մի քանի որ առաջ մայիսի 26-27-ին, երբ Ծաղկաձորում տեղի ունեցավ կուսակցության Հայաստանի եւ ներքին սփյուռքի կազմակերպության հիմնադիր համագումարը: Ինչպես պարզվեց երեկ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, որին մասնակցում էին Ս-ԴՀԿ կենտրոնական վարչության ատենապետ Վահրիճ Ճերեճյանը, Հայաստանի կազմակերպության ատենապետ Եղիա Նաճարյանը, կենտրոնական վարչության մի շարք անդամներ եւ այլն, կուսակցությունը Հայաստան է նկել զորավիգ կանգնելու Հայաստանի անկախ պետականության կայացմանն ու ամրապնդմանը, վերահաստատելու իր վստահությունն ու զորակցությունը Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, նպաստելու ժողովրդավարության հաստատմանն ու պետական քաղաքական կառույցների զարգացմանը եւ այլն: Այն հարցին, թե ինչպե՞ս կարող է սոցիալիստական ուղղվածություն ունեցող մի կուսակցություն զորավիգ կանգնել պետությանը, որն «անշեղորեն» գնում է դեպի դրամատիրություն եւ ազատ շուկայական հարաբերություններ, կուսակցության ներկայացուցիչները պատասխանեցին, թե առայժմ Ս-ԴՀԿ-ն նպատակ չունի զբաղվել գաղափարախոսությամբ եւ դա հետագայի խնդիր է, իսկ ներկայումս պետք է ամեն կերպ նպաստել պետականության զորացմանը, որից հետո միայն կարելի կլինի խոսել ընկերվարական գաղափարախոսության մասին:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան խնդրին, առա կուսակցության ղեկավարներն այն կարծիքը հայտնեցին, թե այն պետք է լուծվի անդայման խաղաքական ճանապարհով՝ փոխադարձ զիջումների միջոցով, ավելացնելով, թե իրենք լավ գիտեն ամերիկյան քաղաքականության էությունը, մանավանդ, որ վերջինիս դաշնակիցը Թուրքիան է, ուստի Հայաստանի միակ նեցուկն առայժմ Ռուսաստանն է, որի շահերը Հայաստանում փոխադարձ են:

Որոշ շրջանակներում կարծիք կա, թե Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը ժամանակին համակողմանի (այդ թվում՝ նյութական) աջակցություն էր ստանում նախկին ԽՍՀՄ կոմկուսից, եւ վերջինիս քայքայման հետ է կապված Ս-ԴՀԿ-ի ներկա բուլացումը: Այս առթիվ կուսակցության ղեկավարները հայտարարեցին, թե իրենք երբեք որեւէ օտար կազմակերպությունից նյութական աջակցություն չեն ստացել, չեն եղել որեւէ օտար կազմակերպության ենթամասնաճյուղ, եւ լավ կլիներ, որ իրենց բարեկամ-կոմունիստները հաստատեն դա: Ավելին՝ բարձրաստիճան կուսակցականները պատմեցին, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ կուսակցության ղեկավարը հրավիրվել էր Երեւան եւ այստեղ հանդիպել Նիկիտա Խրուշչովին, որի ընթացքում բարձրացրել էր նաեւ Ղարաբաղի հարցը: Խորհրդային ղեկավարը պատասխանել էր, թե մեր ներքին հողային հարցերն ինքներս կլուծենք, իսկ ինչ վերաբերում է Արեւմտյան Հայաստանին, առա դրա համար անհրաժեշտ է պատերազմ, իսկ դա մեր ծրագրերի մեջ չի մտնում:

Այն հարցին, թե արդյոք Ս-ԴՀԿ-ն Հայաստանում համալրելո՞ւ է ընդդիմության շարքերը, ասուլիսի մասնակիցները միաբերան պատասխանեցին, թե իրենք կողմնակից են միայն կառուցողական ընդդիմությանը: Մի խոսքով, թեեւ կուսակցությունը եկել է սաստ կանգնելու Հայաստանի պետականությանն ու նախագահին, այնուամենայնիվ չի պատրաստվում ընդդիմության համար ընդդիմություն դառնալ, այլ ավելի շատ ժողովրդի արտահայտիչը դառնալու մտադրություններ ունի, մինչդեռ ներկա սոցիալ-տնտեսական դժվարություններն ու քաղաքական անորոշությունը հուշում են, որ հազիվ թե որեւէ քաղաքական կուսակցություն կարողանա միաժամանակ լինել նախագահի պաշտոնն ու ժողովրդի շահերի արտահայտիչը: Կարծենք կտեսնենք:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կարծիք

Թուրքիայի արտգործնախարարության հայտարարությունը

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման եռակողմ ծրագրի ձախողման կապակցությամբ Թուրքիայի արտգործնախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ: Փաստաթղթում ասվում է, որ ընդունելով այդ ծրագիրն առանց որեւէ նախադայմանների, Այրբեջանը հաստատեց հիմնահարցը խաղաղ ճանապարհով լուծելու իր մտադրությունը: Միեւնույն ժամանակ հայերի կողմից տվյալ ծրագրի մերժումը ցույց տվեց, որ նրանք «մտադիր են լուծել խնդիրը ոչ թե բանակցությունների սեղանի շուրջ, այլ ռազմաճակատում»: Հայտարարության մեջ նշվում է, որ «Ղարաբաղի հայերի վրա պատասխանատվությունը փոխադրելու Հայաստանի փորձը համոզիչ չէ: Հիմնավորված չէ նաեւ այդ ճանապարհով Ղարաբաղի հայերի կողմից խաղաղ կարգավորման ծրագրի մերժումը, որը գնահատվում է որպես Հայաստանի կողմից տեղի ունեցող իրադարձությունների համար պատասխանատվությունից խուսափելու փորձ:

Սնարք

Բարոյ

Ժողովրդավարությունը Արեւմուտքի հետ կապերի պայման

Երկուշաբթի օրը Բաքու ժամանած Մեծ Բրիտանիայի խորհրդարանի պատվիրակության հետ հանդիպման ընթացքում էլչիբեյը հայտարարեց, թե բարձր է գնահատում Լոնդոնի վերաբերմունքը Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման նկատմամբ: Նա նշեց, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորը վերջերս Բաքու ուղարկած հեռագրում հավաստել է Բրիտանիայի դիրքորոշման անփոփոխությունը, որին համաձայնում է Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Այրբեջանի տարածք:

Հանդիպումից հետո Թուրան գործակալության թղթակցի հետ զրույցի ժամանակ Աբուլֆազ էլչիբեյն ասաց, որ Այրբեջանը կզարգացնի եւ կամրապնդի իր հարաբերությունները Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Գերմանիայի, Ռուսաստանի հետ: Նա նշեց, որ ներկայումս Այրբեջանը լավ հարաբերություններ ունի Մեծ Բրիտանիայի հետ: Դա պայմանավորված է նրանով, որ «երկու երկրները շահագրգռված են սերտ կապեր հաստատել տնտեսության եւ խաղաղասիրության բազմաթիվ ոլորտներում:

Նախագահ էլչիբեյը նշեց, որ Արեւմուտքի հետաքրքրությունն Այրբեջանի հանդեպ պայմանավորված է հանրապետության ռազմավարական դիրքով եւ զգալի բնական պաշարներով: Նրա կարծիքով, «մեծ նշանակություն ունի նաեւ աշխարհիկ եւ ժողովրդավարական պետություն կառուցելու մեր ցանկությունը»:

Սնարք

Գրական

Հունաստանը կաջակցի Հայաստանին

Մոսկվա, 1 հունիս, Սնարք: Այսօր սկսվում է Հունաստանի արտգործնախարարության տեղակալ տիկին Վերգինիա Տսուդերոսի այցը Ռուսաստան: Ինչպես հաղորդեցին Մոսկվայում Հունաստանի դեսպանության մամուլի բյուրոյում, նա կմասնակցի «Ռուսաստանի հարավ-միջերկրական ծովի ավազանի երկրներ համագործակցության հեռանկարները» միջազգային համաժողովին, որը հունիսի 2-3-ը տեղի կունենա Անապայում: Տիկին Տսուդերոսն կայցելի նաեւ Բաքու, Երեւան, Թբիլիսի, կհանդիպի քաղաքական գործիչների հետ եւ կքննարկի համագործակցության հարցերը: Նա հանդիպումներ կունենա այդ հանրապետությունների հունական համայնքների ներկայացուցիչների հետ: Վերջերս Բաքվում իր աշխատանքը սկսեց հունական դեսպանատունը: Մինչեւ հունիսի վերջը Հունաստանի դեսպանատունը կբացվի նաեւ Երեւանում: Հունաստանի արտգործնախարարի տեղակալ Վերգինիա Տսուդերոսն վերջերս Աթենքում հայտարարեց, թե Հունաստանը մտադիր է տնտեսական եւ քաղաքական աջակցություն ցուցաբերել Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին: ■

Երեւան

Գիլմորը ողջունում է Հայաստանի որոշումը

Ինչպես հաղորդել էինք, մայիսի 31-ին հանրապետության նախագահն ընդունեց Հայաստանում Մ. Նահանգների առաջին դեսպանի Հերի Գիլմորի հավատարմագիրը: Արարողության ընթացքում, ինչպես տեղեկանում ենք ամերիկյան դեսպանատան մամուլի ծառայության հաղորդագրությունից, դեսպան Գիլմորը, հավատ պատշաճի խոսքից հետո, հակիրճ անդրադարձել է եռակողմ նախաձեռնությանը Հայաստանի հանրապետության եւ ԼՂՀ-ի տված պատասխաններին: «Ես ողջունում եմ, ասել է նա, ձեր որոշումը Լեռնային Ղարաբաղում տիրող կոնֆլիկտի խաղաղ կարգավորման նպատակով ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի միջոցով ճանապարհ հարթելու ուղղությամբ եռակողմ նախաձեռնությունն ընդունելու առթիվ: Ես համոզված եմ, որ շրջանի երկրների միջեւ բարի կամքի վրա հիմնված բանակցություններով ձեռք բերված տեւական խաղաղությունը կարող է հաճարապասխան հող ստեղծել շրջանի ժողովուրդների անվտանգության, տնտեսական համագործակցության եւ բարգավաճման համար: Մյուս կողմից մենք ցավ ենք հայտնում եռակողմ առաջարկի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի հայ ղեկավարների տված պատասխանի համար եւ ուժգնորեն հանձնարարում նրանց գիտակցել, որ հայ ժողովրդի անվտանգությանն ու զարգացմանը լավագույնս կարելի է ծառայել անմիջապես ընդունելով այդ նախաձեռնությունը: Չընդունելով այդ նախաձեռնությունը, Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը վտանգում է առաջացնել միջազգային հասարակության մեղադրանքը, որպես խաղաղության գործընթացը խոչընդոտող կողմ»:

Այնուհետեւ ամերիկյան դեսպանը արտահայտվել է շրջափակման հետեւանքով Հայաստանի ու նրա կառավարության դիմագրաված դժվարությունների ու դրանց հաղթահարման գործում Մ. Նահանգների կառավարության նախաձեռնության միջոցների մասին:

Դեսպան Հ. Գիլմորն ընդգծել է բազմաթիվ ամերիկահայերի ունեցած կապերի կարեւորությունը Հայաստանի հետ արվեստի, գիտության, գյուղատնտեսության եւ արդյունաբերության այլ ասպարեզներում: Կապեր որոնք ծավալվել են երկու կառավարությունների միջեւ հաստատված կապերով: ■

Երեւանում լիբանանյան դեսպանատուն: Լիբանանի Նախարարների խորհուրդը մայիսի 19-ի իր նիստում որոշել է դեսպանություն հաստատել Երեւանում, գրում են մեզ հասած լիբանանյան թերթերը: Որոշումը կայացվել է կառավարության շաբաթական նիստում, որին նախագահում էր հանրապետության նախագահ Էլիաս Հրաուին, վարչապետ Ռաֆիկ Հարիրի ներկայությամբ: Ըստ որոշ տեղեկությունների, Հայաստանում դեսպանություն հաստատելու հարցն օրակարգ է մտել լիբանանյան կառավարության հայազգի անդամների ջանքերով, այն պահին, երբ քննարկվում էր դիվանագիտական առաքելությունների ծիրը մեծացնելու հարցը:

LUXUEUX STUDIOS MEUBLÉS
MONT-ARARAT

YEZEGUELIAN
DANS LE QUARTIER PRESTIGIEUX DES CHAMPS ELYSEES
Locations au mois 1200 $
Studios avec téléphone direct
TV couleur - kitchenette
ՇՔԵՂ, ԿԱՀԱՎՈՐՎԱԾ ԿԱՑԱՐԱՆՆԵՐ ՓԱՐԻԶՈՒՄ
ԵԶԵԿԵԼՅԱՆ
ՇԱՆՋ' ԷԼԻԶԵԻ ՀԱՐԳԻ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ
ԱՄՍԵԿԱՆ 1200 $ ԴՈՒԷ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՐՃԵԼ ՍՏՈՒԴԻՈ ՈՒՂԻՂ ՀԵՌԱԽՈՍՈՎ ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑՈՎ ՈՒ ՓՈՔՐԻԿ ԽՈՀԱՆՈՑՈՎ
S'adresser : 34, avenue Champs-Elysées Paris 8e
Tél.: 43.59.65.81 Fax : 40.74.08.59

digitised by A.R.A.R.@

Առողջապահություն

ՈՒՐՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

Հայաստանի առողջապահական հիմնարկները եւս կրում են ժամանակի իրադարձությունների ազդեցությունը: Չնայած դրան, մեզ մոտ այսօր կատարվում են այնպիսի վիրահատություններ, որոնք իրոք հասանելի են, որ այսօրվա ոչ այնքան հարուստ ոլորտների մեջ եւս հնարավոր է համաշխարհային չափանիշներով գնահատվող ցկումներ անել, եւ որ մեր առողջապահությունը տնտեսության որոշ ոլորտների նման մոլորված այս ու այն կողմ չի նայում: Այս առումով կարեւոր ու հանրապետության առողջապահական անցուդարձի մեջ նշանակալից ներդրում է բժշկական ինստիտուտի ուրոլոգիայի ամբիոնի վարիչ դոցենտ ՅՈՒՐԻ ՁՈՒՐԱԲՅԱՆԻ ու նրա ղեկավարած հանրապետության ուրոլոգիական գլխավոր բազաների գործունեությունը:

– Դոկտ. Զուրաբյան, դուք աշխատում եք ուրոլոգիայի 3 տարբեր բաժանմունքներում. Հանրապետական կլինիկական հիվանդանոցի ուրոլոգիական բաժանմունքում, առողջապահության նախարարության 4-րդ գլխավոր վարչության հիվանդանոցում եւ շտաբ օգնության հիվանդանոցի ուրոլոգիական բաժանմունքում: Իսկ ինչո՞ւ այսօր գոյություն չունի ուրոլոգիական կենտրոն, որտեղ այս բոլոր աշխատանքները միկտեղվեն:

– Այդ հարցը վաղուց է բարձրացվել, սակայն, ցավոք, դայմանները թույլ չեն տվել այդ կենտրոնը բացել: Դրան «նպաստել է» եւ շենքի խնդիրը, դա չի կատարվել նաեւ այն դատճառով, որ նշված բաժանմունքները չնայած գործել են, բայց լիովին չեն կատարել իրենց ֆունկցիաները: Այսօրվա դայմաններում մենք գտանք, որ կարելի է առայժմ այդպես աշխատել, մասնագետներ դատրաստել, իսկ հետո ձեռնարկել կենտրոնի ստեղծումը:

– Իսկ այսդիսի դարագայում, երբ նման ցրվածություն կա երեք հիվանդանոցների միջեւ, արդյոք բարդ վիրահատությունների ժամանակ դա դժվարություն չի՞ հարուցում:

– Չնայած դա որոշ հարցեր է առաջ բերում, այդուհանդերձ յուրաքանչյուր բաղա կատարում է իր գործը: Օրինակ. Հանրապետական հիվանդանոցում այսօր կատարում ենք վիրահատություններ լազերաակռիկ մեթոդներով, որ նախկին ԽՍՀՄ-ում ոչ մի տեղ չի կատարվում: Ներդրվել է հայկական լազերը, որը հայ գիտնականների նորույթն է: Դրանով մենք անմիջապես սկսել ենք աշխատել երիկամների եւ միզադարկի քարեր ենք ջարդում, ուռուցքներ բուժում, ինչպես նաեւ շագանակագեղձի բուժում կատարում: Շտաբ օգնության հիվանդանոցում կատարում ենք մեծ ծավալների ուռուցքային վիրահատություններ երիկամի, միզադարկի վրա, որովհետեւ, ցավոք սրտի, դաթոլոգիան աճում է: Իսկ մեր հիվանդներն էլ, հայկական սովորության համաձայն, ուշ են դիմում եւ մեծացած ուռուցքը ավելի է դժվարացնում վիրահատությունը, որովհետեւ տեղի է ունեցած լինում հիվանդության բարդացում: Մասնավորապես տա վերաբերում է միզադարկի հիվանդություններին, երբ հիվանդի ուշ դիմելու դատճառով ստիպված ենք լինում հեռացնել միզադարկը: Բարեբախտաբար մեր մասնագետներն առաջարկում են լրիվ բնականի եկ միզադարկի դատրաստում աղիքներից, որը լրիվ փոխարինում է բնականին:

– Վերադառնանք մեր զրույցի սկզբում շոշափված երեք կլինիկաներին: Արդյոք այդ տարբորոշվածությունն ազդո՞ւմ է կոնսերվատիվ ուրոլոգիայի ժամանակ: Այսինքն դուք ստիպված դիմում եք վիրահատությունների, երբ ուշացած դեպք է, եւ միաժամանակ որովհետեւ այդքան հնարավորություն չկա առանց վիրահատության, կոնսերվատիվ ձեւով բուժում կատարելու:

– Արտասահմանում բժիշկը իր հիվանդին ննջելուց հետո նրան բերում է որեւէ հիվանդանոց եւ վիրահատում:

– Իսկ մեզ մոտ կոնսերվատիվ ուրոլոգիան հանձնված է դոլիկլինիկաներին...

– Մեզ որ այդքան շատ հիվանդներ են դիմում, ինչի՞ց է: Հո մեզ չե՞ն սիրահարվել: Ուղղակի դոլիկլինիկաներում դատշաճ մակարդակ չկա: Իսկ սրա դատճառն իր հերթին այն է, որ դոլիկլինիկայի բժիշկը տասնյակ տարիներով նստում է այնտեղ ու փաստորեն կարծես դրակտիկայից հեռ մնում: Իսկ արտասահմանում այդդիսի բան չկա, որովհետեւ այնտեղ ինքնուրույն բժիշկն իր համար է աշխատում: Իսկ այստեղ օրդինատորն աշխատում է, իր գլխին բաժնի վարիչ ունի, դոցենտ ունի, դրոֆեսոր ունի եւ այլն, եւ այլն:

– Իսկ եթե լիներ մի կենտրոն, այդ դեպքում հնարավոր կլիներ բերեւս կոնսերվատիվ ուրոլոգիայով զբաղվել...

– Այո, բոլոր հիվանդները կենտրոնացված կլինեին մի տեղ, ավելի ճիշտ եւ հիվանդները եւ լավագույն մասնագետները, որոնք կզբաղվեին նրանցով: Փաստորեն կենտրոնն իր տրածողության եւ հսկողության տակ կդտահի բոլոր մասնագետներին: Հիմա յուրաքանչյուրն ինքնուրույն աշխատում է, եւ ոչ ոք վերահսկելու հնարավորություն չունի: Ասենք, եթե շատ բարդ դեդքեր են լինում, այդ մարդիկ զանգում են, դիմում են, բայց դե այդդիսով գործ չի լինի:

Հետո մի բան էլ, ես այսօր չեմ կարող հանրապետական հիվանդանոցի բժշկին ուղարկել, թե գնա, այսինչ տեղը աշխատիր: Իսկ եթե լիներ կենտրոն, ես կարող էի կենտրոնից մի բժշկի ուղարկել որեւէ այլ տեղ ինչ-որ ժամանակով, այնտեղի բժշկին բերել այստեղ: Ինձ թվում է, որ ոչ միայն ուրոլոգիան, այլեւ բժշկական մյուս մասնագիտությունները եւս դետք է համակարգված լինեն: Այսօր ուրոլոգ են ընդունում աշխատանքի, եւ ոչ որ գլխավոր ուրոլոգին չի հարցնում, թե կարո՞ղ է արդյոք նա աշխատել: Հետո ո՞վ է դատասխան տալու:

Մի ուրիշ բան եւս. արտասահմանում 30-40 մահճակալանոց հիվանդանոցում տարեկան կատարվում է 2000-2500 եւ ավելի վիրահատություն, շրջանառությունը շատ է, որովհետեւ հիվանդը չի դառկում հետազոտման: Նա գալիս է օֆիս, հետազոտվում, նշանակվում է վիրահատության օր, այդ օրը գալիս է, դառկում եւ այդ օրն էլ վիրահատվում է: Իսկ մեզ մոտ մարդը գալիս է, ասենք, Ալավերդուց, ասդ մարդուն չես կարող/ամեն օր տանել-բերել մինչեւ ֆնոնության կատարվի: Ուրեմն դետք է մի կենտրոն ստեղծվի, որտեղ հիվանդը բոլոր կաբինետներում կհետազոտվի միանգամից, հիվանդին կասեա, որ այսինչ օրը կգաս վիրահատության: Այսինքն շրջանառությունն ենք մեծացնում: Եթե շրջանառությունը մեծացնում ենք, մենք կարող ենք ամեն ինչ անել 30-40 մահճակալի վրա եւ այսքան բաժանմունք դետք չէ: Խորհրդային բժշկությունը գնաց մահճակալներ ավելացնելու եւ ոչ թե տեխնիկական հագեցվածության դատ նոր որակի ձեռքբերման ուղղությամբ:

– Չհաշված նաեւ մահճակալային ծախսերը...

– Հիմա բավականին մեծ գումար է կազմում հիվանդի այստեղ գտնվելը: Մեզ դետությունը մի մահճակալի օրվա ծախսերը հաշվում է մոտ 3000 ռուբլի: Իսկ դուք դատկերացրեք, հիմա մենք մի 4-5 օր դատրաստվում ենք հետազոտության, ուրեմն արդեն մոտ 15 հազար ծախսվեց:

– Իսկ դուք հնարավոր համարո՞ւմ եք կենտրոնի բացումը:

– Այո: Պետք չէ, այստեղ ասած, նոր ծավալներ փնտրել: Կան այդ հնարավորությունը: Այդքան շենքեր ազատվեցին: Հենց Ի հիվանդանոցը, որտեղ մեզ ժամանակին խոսք էին տվել կենտրոնը բացել:

– Իսկ եթե այսդես վերցնենք, տարբեր դատճառներով ասդրջապահության նախարարությունը չի կարող այս հարցով զբաղվել, ենթադրենք այդդես է: Եթե ձեզ թույլատրեն այդ հարցով զբաղվել, դուք կարո՞ղ եք այդ բոլորը կազմակերդել:

– Շենքը ազատելու հարցով ես ինչդե՞ս զբաղվեմ, երբ այնտեղ փաստորեն բժշկական տարբեր հիմնարկներ կան, Ի հիվանդանոցը գտնվում է իր գլխավոր բժշկի հավանավորության տակ, իսկ նա էլ քաղաքաբաժնի: Իսկ քաղաքաբաժնի վարիչը ենթարկվում է քաղխորհրդի նախագահին:

– Այսինքն, հակասություն կա քաղաքային քաղխորհրդի եւ նախարարության միջեւ:

– Ի հիվանդանոցի շենքում է գտնվում նաեւ հատուկ դոլիկլինիկա, որը ենթարկվում է սկզբունքային: Այսինքն, այստեղ էլ հարցը դարզ չէ:

– Իսկ երբ, այնուամենայնիվ, կենտրոնը եղավ...

– Կենտրոնը կկատարի հետեւարգող ֆունկցիա: Այն նաեւ կվերադատասի մասնագետներին: Այսինքն, կենտրոնը լինելու է ոչ թե լոկ հիվանդանոց, այլ նաեւ գիտահետազոտական կենտրոն: Կենտրոնը նաեւ հնարավորություն կունենա զբաղվել գիտական աշխատանքով:

– Իսկ կենտրոնի առկայության դեդքում մահացության տոկոսները կկրճատվո՞ւն:

– Իհարկե, եթե կենտրոնը իրոք լինի կենտրոն այս կամ այն բաժանմունքների հետեւ: Մասնագետների միջեւ փոխադարձ կապն ավելի սերտ ու աջակցությունն էլ ավելի անմիջական կլինի:

– Հուսանք, որ դուք ձեր նպատակին կհասնեք, եւ մեր արձագանքն էլ գուցե օգնի դրան:

Զրույցը վարեց
ԳԱԳԻԿ ԵՍԱՅԵՆՑԸ

Վրաստան

Կուդոնը արժեզրկված

Երկու ամիս է, ինչ Վրաստանում շրջանառության մեջ է մտցվել կուդոնը: Իհարկե, դա հարկադրված քայլ էր: Ռուսաստանը փող չէր տալիս, իսկ ժողովուրդը 2-3 ամիս աշխատավարձ չէր ստացել: Եւ ահա Վրաստանի կառավարությունը մինչեւ իր սեփական փողը լաթին շրջանառության մեջ մտցնելը, փորձեց ստեղծված բացը լրացնել կուդոններով, գուցե չմտածելով հետեւանքների մասին: «Մոտակա ժամանակներում հանրապետությունում բացի կուդոնից շրջանառության այլ միջոցներ չեն լինի», օրերս տնտեսական ու տեղական կառավարման մարմինների աշխատողների ժողովում ասաց Վրաստանի ազգային բանկի նախագահ Դվալիշվիլին: Իսկ վրացական կուդոնը այսօր արագ թափով արժեզրկվում է: Չնայած կուդոնը շրջանառության մեջ է մտցվել ռուբլու կուրսին հավասար, սակայն այսօր Ջավախքում վրացական 1 կուդոնն արժե 50 կոդեկ: Մյուս կողմից, կուդոնի գործածման շրջանակները չափազանց նեղ են: Թեեւ կառավարությունը որոշում է ընդունել կուդոնով ստեղծուր չանող խանութների փակման մասին, սակայն դա միայն ձեւական բնույթ է կրում: Ամենուր հրաժարվում են կուդոնով առեւտուր անելուց: Իսկ ժողովուրդը, ստիպված շրջանցելով կուդոնը, ընտրել է ապրանքի ապրանքափոխանակման դարզ ու համեմատաբար ավելի հարմար ձեւը՝ կարտոֆիլն ու դանիրը փոխանակում են այլ ապրանքների հետ: Եթե այսդես շարունակվի, բնականաբար, կարճ ժամանակ անց կուդոնը դուրս կգա գործածությունից: Հակառակ դեդքում, Ջավախքում առաջ կգան նոր-նոր խնդիրներ, որոնք էլ ավելի կդժվարացնեն առանց այդ էլ ծանր կացությունը:

Այս կողմից, ոչ դաշտոնական աղբյուրների համաձայն, առանձին առեւտրական բանկեր արդեն սկսել են Ռուսաստանի հետ բանակցություններ վարել՝ ռուբլու հաշիվներ բացելու համար:

ՍԻՍԱՔ ԹՈՐՈՍՅԱՆ
Մեր. սեփ. թղթակից Ջավախք

Հայաստանի Ամերիկյան համալսարան

Հատուկ դասընթացների բաժին

«Ճառագայթային դաշտանություն»

Հունիսի 12, շաբաթ, ժ. 10.00-12.00
Հունիսի 14-18, ժ. 18.00-21.00

Դասախոս՝ Դոկտոր Արա Ճանճալյան

Դասընթացն ընդհանուր ակնարկ է ճառագայթային առողջապահության եւ աղտահոդության մասին: Նպատակն է ծանոթացնել ճառագայթված միջավայրի, աշխատողների, հիվանդների եւ ընդհանրապես հասարակության դաշտպանության հիմնական կանոններին: Նախատեսված է մասնակիցներին ծանոթացնել ներկայումս այս բնագավառում կատարվող աշխատանքներին, իրականացվող քաղաքականության գործնական քայլին, բժշկական եւ արդյունաբերական ճառագայթային անվտանգության սկզբունքներին, նրա արդյունավետ իրականացմանը եւ վտանգը հնարավորության սահմաններում կանխելու մեթոդներին:

Դասընթացներում ուսումնասիրվող թեմաներն են՝

1. Բնության եւ միջավայրի ճառագայթային դաշտանությունը.

2. Բժշկական ճառագայթային դաշտանությունը.

3. Արդյունաբերական-հաղարային ճառագայթային դաշտանությունը:

Դասախոսությունները կընթանան անգլերեն լեզվով, հայերեն հարցերը թարգմանությամբ: Գրանցման արժեքը՝ 200 ռուբլի:

Տեղեկությունների համար զանգահարել 27-33-70, 27-16-58 հեռախոսահամարներով:

Դասագիր

Լավագույն աշակերտները կմեկնեն ԱՄՆ

Օրերս ընտրվեցին Հայաստանի միջնակարգ դդոցների 8-9-դ դասարանների այն 34 աշակերտները, որոնք մեկ տարով կմեկնեն Միացյալ Նահանգներ ուսումնառության: Նրանք կհասնեն ԱՄՆ կառավարության կողմից հովանավորվող Freedom Support Youth Exchange ծրագրին:

Մրցույթն անցկացնում էին World Learning կազմակերդության Վաշինգտոնի կենտրոնի մասնագետները: Մոտ 1500 դիմորդներից եռափուլ մրցույթից հետո ընտրվեցին 34 լավագույն աշակերտները: Նրանք կմեկնեն ԱՄՆ երկու խմբով, առաջինը հուլիսի վերջին, իսկ երկրորդը օգոստոսի սկզբին: Ահա այդ 34 երիտասարդների անունները. Գեւորգ (Զորջ) Սրբուհանյան, Երեւան, թիվ 1 ֆիզիկամաթեմատիկական դդոց, Զավեն Ակոդով, Երեւան, թիվ 196 դդոց, Արամ Աստվածյան, Երեւան, թիվ 19 դդոց, Հայկ Սասսեյան, Երեւան, թիվ 114 դդոց, Իսենն Ավետյան, Երեւան, թիվ 172 դդոց, Լուսինե Ազատյան, Երեւան, թիվ 20 դդոց, Գայանե Դավոյան, Երեւան, թիվ 8 դդոց, Մարիա Գաբրիելյան, Երեւան, թիվ 8 դդոց, Զարա Դարիբյան, Երեւան, թիվ 8 դդոց, Վարդուհի Դաղբաշյան, Գյումրի, Էդդ Բայրոնի անվան դդոց, Նինա Գրիգորյան, Երեւան, թիվ 8 դդոց, Սոնա Հակոբյան, Երեւան, թիվ 122 դդոց, Գոռգեն Գակոբյան, Երեւան, թիվ 7 դդոց, Սոնան Հարությունյան, Երեւան, թիվ 122 դդոց, Կարեն Հովսեփյան, Երեւան, թիվ 8 դդոց, Շուշանիկ Յավուրյան, Երեւան, թիվ 42 դդոց, Զարա Կարապետյան, Երեւան, թիվ 83 դդոց, Անուշիկ Կարգանյան, Երեւան, թիվ 67 դդոց, Մարի Դանիելյան, Երեւան, թիվ 8 դդոց, Մարի Խաչատրյան, Երեւան, թիվ 67 դդոց, Նոնար Քոչարյան, Երեւան, թիվ 55 դդոց, Մարգիս Քոչանջյան, Երեւան, թիվ 83 դդոց, Սոնա Միհայելյան, Երեւան, թիվ 8 դդոց, Հարի Մուրադյան, Երեւան, թիվ 8 դդոց, Հայկ Ներսիսյան, Երեւան, թիվ 8 դդոց, Սաշեն Հովհաննիսյան, Երեւան, թիվ 3 դդոց, Գոհար Պետրոսյան, Գյումրի, թիվ 8 դդոց, Իգաբելա Սարգսյան, Երեւան, թիվ 149 դդոց, Սյուզաննա Սիմոնյան, Երեւան, թիվ 114 դդոց, Մարգարիտ Ճաղեւսյան, Երեւան, թիվ 172 դդոց, Արա Վարդանյան, Երեւան, թիվ 55 դդոց, Սիդա Վարդանյան, Երեւան, թիվ 149 դդոց, Լիլիթ Երզնկյան, Երեւան, թիվ 182 դդոց եւ Արտյոմ Զաքարյան, Գյումրի, Բալասոն դդոց: ■

Հայաստանն ունի բարձրակարգ առողջապահություն

«Նախկին ԽՍՀՄ առողջապահությունն բնդհանուր տմտմոնք գիջել է համաշխարհային մակարդակին: Բայց Հայաստանը, ի տարբերություն այլ հանրապետությունների, շատ ավելի զարգացած սարքավորումներ ունի», մեր թղթակցին հայտնեց ՀՀ առողջապահության նախարար Արա Բարլոյանը: Մեր հարեւան հանրապետությունները՝ Վրաստան, Ադրբեջան, երբեւիցե չեն կարող Հայաստանի հետ ժրցել: Հայաստանը գեռաղահովված է բժիշկներով ու հիվանդանոցներով: 10 հազար բնակչին Հայաստանում բնկնում է 48 բժիշկ, սա ուղիղ 10 անգամ ավել է, քան հարեւան Իրանում: Իսկ աշխարհի ամենազարգացած երկրները, ինչպես նախարարը նշեց, ունեն նույնքան բժիշկներ: Հիվանդանոցների եւ մահճակալների թիվը եւս Հայաստանում աղահովված է: Հիմնական դժվարությունը դեղամիջոցներն ու ասարքավորումներն են: Իսկ սա օբյեկտիվ երեւույթ է, որովհետեւ առողջապահությունը երբեմ չի կարող աշաջ ընկնել էկոնոմիկայից, տնտեսական բազան է թելադրում առողջապահության մակարդակը, նշեց դրն. Բարլոյանը: Բայց նկատվում է մի լուրջ դժվարություն, հիմա տնտեսությունը ճգնաժամի մեջ է, եւ վտանգ կա, որ առողջապահության մակարդակը կարող է իջնել: Չնայած դա կարող է օբյեկտիվ համարվել, բայց մենք ձգտում ենք, որ դա տեղի չունենա:

ՀՀ առողջապահության նախարարից տեղեկացանք նաեւ նշանակալից մի փաստի մասին, ամերիկյան Medical Assistance Programm կազմակերդությունն օգնություն է ցույց տալիս աշխարհի 40 երկրների, եւ Հայաստանն այդ ցանկում գտնվում է 1-ին տեղում: Այդ կազմակերդությունից ստացվել է 5 մլն 400 հազար դոլլարի դեղորայք: Համեմատության համար ասենք, որ Ռուսաստանը գտնվում է 7-րդ տեղում, ստացել է 1 մլն դոլլարի դեղորայք:

Գ. Ն.

digitised by A.R.A.R.@

Տարեմուտ

ԱՆՄԵՂ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ

կամ սպառողները իրավազուրկ եւ անօգնական վիճակում

Ուրեմնյան զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների հիմնական նշանաբաններից մեկը «Սպառողը բազավոր է» արտահայտությունն է: Եւ դա հասկանալի է. շուկայական հարաբերություններում ցանկացած ձեռնարկչական գործունեության հաջողությունը նախեւառաջ սպառողի դրամապանակն է առաջնվում:

Դա նշանակում է, որ այդ ոլորտներում գնորդը գտնվում է լիակատար առավելության մեջ եւ նրա շահերին ոչինչ չի սպառնում: Սակայն ապրանքների բազմաբանակությունը եւ բազմատեսակությունը, դարձվում է, ամենեին էլ արտադրողների եւ միջնորդ կազմակերպությունների ազնվության երաշխիք չեն, բացի այդ, դահանջները ճիշտ բավարարելու տեսանկյունից լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հարց է առաջանում:

Եւ որդեսզի սպառողն ազատորեն կողմնորոշվի ապրանքների շուկայում, ճիշտ ընտրություն կատարի, ճանաչի անորակ արտադրանքը, դահանջները ներկայացնի արտադրողին կամ վաճառողին, նա; առաջին հերթին, ապրանքների, ծառայությունների որակի ու անվտանգության, ինչպես նաեւ իր իրավունքների մասին լայն տեղեկատվություն դետք է ունենա:

Այս խնդիրը զարգացած երկրներում տասնյակ տարիներ շարունակ հաջողությամբ, սպառողների շահերը դաշտպանելու կոչված, հասարակական կազմակերպություններն են իրականացնում, որոնք ամենայն մանրակրկիտությամբ են ստուգում արդյունաբերական ապրանքների, սննդամթերքի որակը: Նրանց ուշադրության կենտրոնում են գտնվում նաեւ տարատեսակ ծառայությունները, ապահովագրական ընկերությունները, խնայբանկերը, տուրիստական բյուրոներն ու աղաստարկող արհեստանոցները: Դեպքերս մեծ տեղ է հատկացվում շրջակա միջավայրի մաքրության եւ ուժանյութի խնայողության հարցերին: Ոդջ այս աշխատանքի արդյունքները հասարակայնության սեփականությունն են դառնում այդ կազմակերպությունների կողմից հրատարակվող լրատվական միջոցների շնորհիվ, որոնց տիրաժը հարյուր հազարների, անգամ միլիոնների է հասնում:

Ավելացնենք, որ բացի առանձին երկրներում գործող նման միությունների, ստեղծվել է նաեւ «Սպառողների ընկերությունների միջազգային կոնֆեդերացիա»: Իսկ ՄԱԿ-ը 1985 թ. սպառողների շահերի դաշտպանության ղեկավար սկզբունքներ է ընդունել, որոնք ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների համար դարտադիր են: Նշենք դրանցից հիմնականները.

– ապրանքների ֆիզիկադես անվտանգ լինելը.

– սպառողների տնտեսական շահերին աջակցելը եւ այդ շահերի դաշտպանությունը.

– սպառողական ապրանքների եւ ծառայությունների անվտանգության նորմերի ու որակի ապահովումը.

– սպառողական ապրանքների եւ ծառայությունների բաշխման համակարգի ստեղծումը.

– այնդիսի միջոցառումների առկայությունը, որոնք սպառողներին փոխհատուցման հնարավորություն են տալիս.

– սպառողների տեղեկատվության եւ լուսավորության ծրագրերի մշակումը.

– կոնկրետ դյորտներին վերաբերող միջոցառումների առկայությունը:

Իսկ ի՞նչ վիճակում են շուկայի ուղին բռնած մեր հանրապետության սպառողները: Եթե Արեւմտյան նրանք համեմատվում են բազավորների հետ, ապա մեզ մոտ համապատասխան հոմանիշը, կարծում եմ, «սրուկը» կամ «ճորտը» դետք է լինի: Ավելի իրավազուրկ եւ անօգնական վիճակում այսօր դժվար է դատկերացնել:

«Ներկա դրությամբ խանութատերերին ինչ-որ դահանջ ներկայացնելու կամ որեւէ տեղ բողոքելու ոչ իրավունք կա, եւ ոչ էլ հնարավորություն», ասաց ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Հրանտ Մարգարյանը:

Իսկ այդ իրավունքը տվող ՀՀ Գերագույն խորհուրդը, որը դեռեւս 4-րդ նստաշրջանում դետք է ընդուներ «Սպառողների իրավունքների մասին» օրենքը, չգիտես ինչ տրամաբանությամբ այն որդես հեռանգված նախագիծ այդդես էլ չընդգրկեց ոչ հինգերորդ եւ ոչ էլ այս 6-րդ նստաշրջանում քննարկվելիք օրենագծերի ցանկում: Նախագծի «տեր» առողջադահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բագրատ Ասատրյանը սկզբում չհավատաց, որ վերոհիշյալ օրենքը 6-րդի օրակարգում չի նշված, իսկ այնուհետեւ դա բացատրեց օրենքի ոչ հրատադությամբ: Այնուհետեւ նա ճշգրտեց, որ եթե անգամ օրենքն ընդունված էլ լիներ, չէր գործի, քանզի նախ կառավարությունը դետք է մի շարք համադատասխան ենթաօրենսդրական ակտեր հրադարակի: Գործադիր բարձրագույն իշխանության ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանն իր հերթին գտնում է, թե այս բնագավառում ոչինչ էական չի փոխվի, քանի դեռ օրենսդիր բարձրագույն մարմինը ոչ միայն վերոհիշյալ, այլեւ «Առեւտրի մասին» օրենքը չի ընդունել:

Պետք է ասել, որ դեկավարության վերին շարքերում խնդրի նկատմամբ կարծես թե որոշակի դրական տեղաշարժ է նկատվում: Նախ ՀՀ 1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրից հայտնի դարձավ, որ «Սպառողական շահերի դաշտպանության, առեւտրական ծեռնարկություններում, անկախ նրանց կազմակերդական-իրավական տեսակներից, առեւտրի կազմակերդման եւ գործունեության վերահսկման նդաստակով նախատեսվում է ստեղծել սպառողական ապրանքների որակի եւ առեւտրի դետական տեսչություն»: Արդա «Հանրապետությունում առեւտրի կազմակերդման բարելավման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության մայիսի 23-ի որոշումից տեղեկացանք, թե դա ինչդես է կյանքի կոչվելու: Այսդես, նշելով, որ առեւտրի համակարգում առկա են լուրջ բերություններ եւ բացդողումներ, մանրածախ առեւտրի ցանցը հագեցված չէ հաշվառման դարզեցմանը եւ սպասարկման կուլտուրայի բարձրացմանը նդաստող հաշվիչ-վերահսկիչ դրամարկղային ապարատներով, անբավարար է իրականացվում ապրանքների, հատկադես դարենային, որակի վերահսկողությունը, չեն դահանջվում ապրանքների դահման տարրական կանոնները եւ այլն, կառավարության տասը կետից բաղկացած որոշման մեջ տեղ են գտել նաեւ հետեւյալ դրույթները.

ՀՀ առեւտրի նախարարությանը՝

– հանրապետության առեւտրի ամբողջ համակարգում առեւտրի դետական կարգավորման կանոնների դահդանման եւ վերահսկողության նդաստակով մեկամսյա ժամկետում մշակել եւ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել նախարարության դետատեսչության հիմքի վրա որակի եւ առեւտրի դետական տեսչության ստեղծման վերաբերյալ որոշման նախագիծ եւ տեսչության կանոնադրության նախագիծ.

– երկամսյա ժամկետում, շահագրգիռ կազմակերդությունների հետ համատեղ, շուկայական տնտեսության դահանջներին համադատասխան վերամշակել առեւտրի գործող կանոնները եւ ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Եթե դահանջվեն այս ժամկետները եւ հետագա քննարկումներն էլ առավել օդերաշիվ անցկացվեն, ապա ամենաշուտը մյուս տարվա սկզբներին սպառողները կունենան մի հասցե, որտեղ կարելի կլինի դաշտպանություն ակնկալել: Միգուցե դա կդդաստացնի «ամենակարող» խանութդաններին:

ԱՊՀ մի շարք երկրներում ստեղծվել են սպառողների շահերի դաշտպանության «սեփական» կազմակերդությունը:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Դիմորոշ

Հայ մշակույթի շաբաթ Նիկոզիայում

Մելբոնյան կրթական հաստատությունը եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Նիկոզիայի մասնաճյուղն այս տարի եւս անցկացրին իրենց հերթական «Հայ մշակույթի շաբաթը», որը տեղի է ունենում 1980 թ. սկսած: Շաբաթն անցավ մեծ հաջողությամբ՝ գրավելով ոչ միայն կիդրահայության, այլեւ հույն բնակչության հետաքրքրությունը: Նիկոզիայի ռադիոն, հեռուստատեսությունը եւ մամուլը լուսաբանեցին շաբաթվա ընթացքում իրականացվող բոլոր միջոցառումները: Քաղաքի մեկժամյա հայկական ռադիոծրագիրը հաղորդումներ նվիրեց շաբաթին, ձայնասփռեց մասնակիցների հետ հարցազրույցները: Շաբաթվա ընդհանուր օրագիրը, առանձին հրադարակվելուց եւ տարածվելուց բացի, լույս ընծայվեց Cyprus weekly անգլերեն շաբաթաթերթում: Վերջինիս մեջ տեղեկություններ էին հրատարակվում շաբաթվա բոլոր իրադարձությունների մասին:

Մշակույթի շաբաթվա առաջին երկու նիստերին (ապրիլի 7-ին եւ 9-ին) լսվեցին Մաշտոցի անվան Մատենադարանի բաժնի վարիչ, դատմական գիտությունների դոկտոր Վաղդան Գրիգորյանի զեկուցումները «Լեռնային Ղարաբաղի անցյալ եւ ներկա դժվարին կացությունը», «Համշենցի մահմեդական հայերը» թեմաներով: Վ. Գրիգորյանը հրավիրված էր Երուսաղեմից, որ նա այժմ ժամանակավորապես աշխատում է Հայոց դատրիարքարանի ժառանգավորաց վարժարանում: Դասախոսություններն ուղեկցվեցին գունավոր լուսադատկերների եւ տեսաֆիլմի ցուցադրությամբ:

Ըստ ծրագրի, երեկոներից մեկը նվիրված էր Արամ Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին: Մեծ երգահանի ստեղծագործական կյանքի մասին հայերեն ու անգլերեն խոսք ասաց Երեկոյի գեղարվեստական ղեկավար, Մելբոնյան վարժարանի երաժշտության բազմամյա ուսուցիչ, երգչախմբի ղեկավար Սեդրուշ Արգարյանը: Նա Ա. Խաչատրյանին բնութագրեց որդես հայ ժողովրդին դատիվ ու ճանաչում բերող մեծատաղանդ մի կոմդոզիտորի, որի երաժշտությունը մտել է համաշխարհային արվեստի գանձարան:

Համերգային բաժնում հանդես եկան վարժարանի երգչախումբը (ղեկավար՝ Ս. Արգարյան) եւ փողային նվագախումբը (ղեկավար՝ Երեւանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դասատու Ֆելիքս Մովսիսյան): Ա. Խաչատրյանի գործերի կատարմամբ հանդես եկան նաեւ Աստա Ռոսկանյանը (ֆուրակ), Ալինա Դաֆնյանը (դաշնամուր), Եւգինա Ռուսոն (դաշնամուր), Ֆ. Մովսիսյանը (փող):

Հանդիսականները մեծ ջերմությամբ ընդունեցին կիդրացի հույն նշանավոր դաշնակահար Մամուդին, որը կատարեց Ա. Խաչատրյանի սոնատը:

Շաբաթվա միջոցառումներից մեկը նվիրված էր Հայ Բարեգործական Ընդհանուր Միության 87-րդ տարեդարձին: Վարժարանի երգչախումբը կատարեց ՀԲԸՄ հիմնը, հետո զեկուցումով հանդես եկավ Բեյրութի Հայկազյան քոլեջի դասախոս, «Մասիս» շաբաթաթերթի դատասխանատու խմբագիր Անդրանիկ վարդապետ Կոռանյանը, որը բարձր գնահատական տվեց Միության 87-ամյա ազգօգուտ եւ արդյունավետ գործունեությանը:

Նիստերը տեղի էին ունենում վարժարանի հանդիսասրահում, եւ ներկաների թիվն ամեն անգամ կազմում էր շուրջ 500-ական մարդ: Բայց հերթական միջոցառման համար այդ դահլիճն այլեւս փոքր էր: Այն անցկացվեց քաղաքապետարանի ընդարձակ ու շքեղ թատրոնի շենքում, որի 1500 տեղանոց դահլիճը լեփլեցուն էր հանդիսականներով:

Հայաստանի ու հունական հիմների կատարումից հետո, որոնք հնչեցին Մելբոնյան վարժարանի փողային նվագախմբի կատարմամբ, բեմ բարձրացավ վարժարանի սանուհի Մելինե Ակելովուլոն, որը հանդես եկավ բացման խոսքով: Այնուհետեւ երգչախումբը մեծ ոգեշնչմամբ կատարեց «Հիմի է՞լ լռենք», «Փամբ որոտան» եւ այլ հայրենասիրական երգեր, իսկ փողային նվագախումբը հնչեցրեց հայկական ու դասական յոթ եղանակներ: Մելբոնյան վարժարանի սաներ, ասմունքողներ Գյուլա Կարաղեսյանը եւ Մարգար Իզմիրլյանը ընտիր հունարենով կարդացին դյունավետ գործունեությանը:

Նիստերը տեղի էին ունենում վարժարանի հանդիսասրահում, եւ ներկաների թիվն ամեն անգամ կազմում էր շուրջ 500-ական մարդ: Բայց հերթական միջոցառման համար այդ դահլիճն այլեւս փոքր էր: Այն անցկացվեց քաղաքապետարանի ընդարձակ ու շքեղ թատրոնի շենքում, որի 1500 տեղանոց դահլիճը լեփլեցուն էր հանդիսականներով:

Հայաստանի ու հունական հիմների կատարումից հետո, որոնք հնչեցին Մելբոնյան վարժարանի փողային նվագախմբի կատարմամբ, բեմ բարձրացավ վարժարանի սանուհի Մելինե Ակելովուլոն, որը հանդես եկավ բացման խոսքով: Այնուհետեւ երգչախումբը մեծ ոգեշնչմամբ կատարեց «Հիմի է՞լ լռենք», «Փամբ որոտան» եւ այլ հայրենասիրական երգեր, իսկ փողային նվագախումբը հնչեցրեց հայկական ու դասական յոթ եղանակներ: Մելբոնյան վարժարանի սաներ, ասմունքողներ Գյուլա Կարաղեսյանը եւ Մարգար Իզմիրլյանը ընտիր հունարենով կարդացին հատվածներ հունական դիցաբանությունից: Ներկաները ջերմությամբ ընդունեցին վարժարանի ավագ ու կրտսեր աղջիկների, ինչդես եւ երկսեռ դարախմբերի ՀԲԸՄ ու Նարեկյան դդրոցի դարախմբերի ելույթները: Շատ տպավորիչ էր բոլոր խմբերի կատարած «Զեյթունցիներ» երգ-դարը, որին մասնակցում էին շուրջ 80 կատարողներ: Դարային խմբերի ղեկավարն էր Երեւանից հրավիրված հմուտ դարուսույց Գագիկ Մխիթարյանը:

Համերգին, որն անջնջելի տպավորություն թողեց հանդիսականների վրա, ներկա էին կիդրահայ համայնքի դետական ներկայացուցիչ եւ Մելբոնյան կրթական հաստատության հոգաբարձության ատենադետ Արամ Գալայճյանն իր տիկնոջ հետ, Կիդրոսի նախագահի տիկին Լիլիա Կլերիդեսը, Նիկոզիայի քաղաքագլուխ Դիմիտրադիսի տիկինը, Կիդրոսում ԱՄՆ դեսպան Լամբը, Իսրայելի դեսպան Գրանիթը, ինչդես նաեւ Ռուսաստանի, Բուլդարիայի, Գերմանիայի դեսպանների խորհրդականներ, կիդրական կառավարության անդամներ, կուսակցությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան դաշտոնյաներ եւ բոլոր կիդրացիներ:

Մշակույթի շաբաթը, որի կազմակերդման գործում մեծ եռանդ դրեց վարժարանի ղեկավարությունը՝ հանձինս Անդրանիկ Դաֆնյանի եւ Փառեն Մինասյանի, եւս մի անգամ հավաստեց այն մեծ դերը, որ կատարում է կիդրահայ մշակութային կյանքի զարգացման գործում Մելբոնյան կրթական հաստատությունը:

Թղթակից, Նիկոզիա

Երեւան

Հայ գործարարների ֆորում

Մայիսի 29-ին Երեւանում բացված հայ գործարարների ֆորումը շարունակվեց 2 օր: Ելույթներից բացի, սփյուռքի եւ Հայաստանի գործարար մարդիկ կարծիքներ հայտնեցին ֆորումի, նրա աշխատանքների, ծրագրերի, հեռանկարների մասին:

ՎԱՀԵ ՇԱՀՄՈՒՏԱՐՅԱՆ (Ֆրանսիա). Ֆորումի նախագահ: Եղել եմ «Քրեդի Սուիս» դրամատան ընդհանուր տնօրենը, այս տարվա հունվարի 1-ից հիմնել եմ իմ անձնական գրասենյակը, որ զբաղվում է ֆինանսական խորհրդատվությամբ: Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի շրջանային կոմիտեի գանձապահն եմ: Ֆորումից մեծ սպասումներ ունեմ՝ գաղափարների, մտքերի փոխանակումներ եւ համագործակցություն Հայաստանի արդյունաբերողների, գործարար մարդկանց հետ: Հույս ունեմ, որ կկարողանանք օգտակար լինել մեր հայրենիքի տնտեսության բարգավաճմանը եւ որ թե՛ հայերը, թե՛ օտարները ներդրումներ կունենան Հայաստանում:

ՋՈՐՋ ՔՅՈՇԿԵՐՅԱՆ (ԱՄՆ). Ես զբաղվում եմ հանակարգիչներով: Գրասենյակներ ունեմ ԱՄՆ-ում եւ Հայաստանում: Մեծ ծրագրեր կան այստեղի գրասենյակի հետ կապված: Հիմա Երեւանի աշխատակիցներն ընդամենը երեք հոգի են, սակայն դետք է ջանանք, որ ֆիրման ընդլայնվի եւ աշխատակիցների թիվը հասնի 100-ի: Գրասենյակը զբաղվում է հաշվարկներով եւ հաճախորդներ ունենք ոչ միայն Հայաստանում, այլեւ Մոսկվայում եւ ԱՄՆ-ում: Եւ դետք է ուրախ լինենք, որ Հայաստանի գրասենյակի առաջարկած հաշվարկային ծրագրերն ընդունելություն են գտնում ամենուր: Ֆորումը հնարավորություն է ընձեռում նոր ծանոթություններ հաստատել գործարար մարդկանց հետ, որոնց հետ կարելի է համագործակցել:

ՀՈՎՍԵՓ ՍԵՖԵՐՅԱՆ (Հնդկաստան). Ես «Ցանս ինքերնեյշընլ» ֆիրմայի նախագահն եմ: Ժամանակի մեծ մասը Երեւանում եմ, չնայած գրասենյակներ ունեմ Հնդկաստանում, Կանադայում, ԱՄՆ-ում: Հայրենիքում բազմաբնույթ գործեր եմ ծեռնարկել՝ հրատարակչական, գովազդային, տպագրական, սարքավորումներ եմ բերել դպրոցական շշերի, խողովակների, տոդրակների եւ այլ իրերի դատրաստման համար: Դժբախտաբար, էներգետիկ ճգնաժամը եւ հումքի դակասը դեռեւս թույլ չեն տալիս սկսել այդ իրերի արտադրությունը: Շուտով իմ դրամատունը կունենան Երեւանում հետաքրքրվելու համար մյուս ընկերությունների ֆինանսական գործունեությունը: Ֆորումի վարչականներից եմ եւ խոր գիտակցում եմ, որ մեր գործունեությունը, մեր կյանքը դժվարին է: Գործարար աշխարհն ամենից շատ է սիրում կայունություն, իսկ մեր դայմանները ոչ միայն կայուն չեն, այլեւ հաղորդակցության միջոցների հսկայական դակաս կա շրջափակման, էներգիայի գրեթե բացակայության, բյուրոկրատական խոչընդոտների եւ օրենքների անկատարության դատճառով: Այս ամենը աննդաստ հող են ստեղծում գործի համար: Բայց քանի որ մեր կազմակերդությունը կոչվում է Հայ գործարարների ֆորում, ապա «հայ» բառը մեզ շատ է դարտավորեցնում: Եթե աշխարհի գործարարներն սդասում են ավելի բարենդաստ դայմանների, ապա հայ գործարարը դետք է նեղ օրերին հասնի իր հայրենիքին: Մանավանդ հիմա, երբ հայաստանցի գործարարների մեծ արտահոսք է եղել դեդի ԱՊՀ այլ դետություններ, իր հետ տանելով նյութական միջոցներ, միտք, կարողություն: Սփյուռքահայ գործարարը կրկնակի եռանդով դիտի գա, որդեսզի դակասեցնի օրեցոր աճող գործազրկությունը: Դրա համար իշխանությունները դետք է նդաստավոր դայմաններ ստեղծեն:

ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ (ՀՀ ԳԱԱ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ). Ֆորումն ինձ հրավիրել է որդես հյուր: Այն արդեն երրորդ անգամ է անցկացվում: Հենց առաջին Ֆորումից էլ սդասելիքները նույնն էին: Դա սփյուռքահայ գործարարների միջոցով արտասահմանյան կադիտալի բափանցումն էր Հայաստան, Հայաստանի տնտեսական կյանքին նրանց մասնակցությունը: Իմ կարծիքով, արդյունքները գոհացուցիչ չեն: Այն առաջադրանքները, որ ուներ առաջին Ֆորումը, լրիվ մասնակիորեն են իրականացվել: Դրա համար կան եւ օբյեկտիվ, եւ սուբյեկտիվ դատճառներ: Ամեն անգամ այն տդավորությունն է ստեղծվում, որ կարծես նոր միայն առաջին հայն է կատարվում: Դեռեւս բարիանիվը բարի չի հավաքել:

«Ազգ»

digitised by A.R.A.R.@

Շարունակ

ԱԴՐԲԵՋԱՆ. ՄԵԿ ՏԱՐՎԱ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՎԻՃԱԿՆ ԱՎԵԼԻ ՈՂԲԱԼԻ

Իրանի ընդդիմադիրները ֆինանսական են ԱԺՄ-ին

Խորհրդային Ռուսաստանի կայսրության Փեղինակը նկատի ունի ԽՍՀՄ-ը) փլուզումով Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի վերանկախացման դարագլխում լեզվական եւ կրոնական կույր ազգայնականության ժանտախտը գլուխ է բարձրացրել եւ ավերածություններ կատարելու համար դարաս հող է գտել: Մյուս կողմից էլ ազգային-կրոնական եւ ռասիսական հողի վրա դաստիարակվի եւ հակամարտությունների կրակը բոցկլտում է աշխարհի 50 կետերում: Հայ-ադրբեջանական հակամարտությունը մերրընդմեր բոցավառվում է, իսկ հարցի խաղաղ կարգավորման նպատակով կայացած յուրաքանչյուր նիստից հետո դատերազմն ավելի դաժան բնույթ է կրում եւ թվում է, թե դա արվում է հակամարտ ուժերի կենտրոնացման նպատակով:

Անկասկած, Ադրբեջանի Հանրապետությունը նախ եւ առաջ նպատակամղված է Իրանի ադրբեջանցիներին իր կողմը գրավելու, ընդհուպ մինչեւ Ադրբեջանը անդամահատեն Իրանի մարմնից: Այս խնդիրը վերածվել է իշխող ԱԺՄ-ի ու ադրբեջանցիների որոշ մասի համար ամենակարեւոր ու լուրջ հարցի: Նրանք այս քաղաքականությանն են հետեւել եւ կհետեւեն թե բացահայտ, թե քողարկված ձեւով: Իսկ նման քաղաքականությունը նաեւ ավելի լուրջ դատապարտման է դատահանգում, հակառակ դեպքում մեզ անլուծելի դժվարությունների առջեւ կկանգնեցնի: Ուստի կաշխատենք ընդհանուր գծերով բնութագրել Ադրբեջանում տիրող իրավիճակը եւ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը Ադրբեջանի նկատմամբ:

Հայկական ուժերի ծրագրված հարձակումները, որոնք իրականացվում էին ռուսական բանակի համագործակցությամբ, Քելբաջարի անկմանը հանգեցրեց, որն աննախադեպ քաղաքական եւ ռազմական դարստություն դատճառեց Ադրբեջանին: Թեղեռ եւ այդ գրոհները միջազգային ատյանների եւ ԱՄՆ-ի կողմից դժկամությամբ եւ թույլ կերպով դատապարտվեցին, սակայն հայ ծայրահեղականները մաքնամտիկոս Վազգեն Մանուկյանի ղեկավարությամբ վճռական եւ համարձակ են դարձել: Չնայած այդ դարստությունները Ադրբեջանի ժողովրդին հուսախաբ են արել եւ վիշտ դատճառել, այնուհանդերձ դա նախ եւ առաջ իշխող ԱԺՄ-ի եւ Ադրբեջանի նախագահի դարստությունն էր:

Էլչիբեյը նախքան իշխանության գլուխ գալը Ադրբեջանի յուրաքանչյուր դարստության արմատները դեկավարության եւ հրամանատարների «դավաճանությամբ» էր բացատրում եւ այսօր ինքն է այդ մտածելակերպի զոհը դարձել, որի տարածման ուղղությամբ ջանք չէր խնայում: Ադրբեջանցիներն անուշադրության մատնելով իրենց հետամնացության փաստը Հայաստանի համեմատությամբ, ԱԺՄ-ի շարքերում փնտրում են այն «դավաճաններին», որոնք այդ դարստությունների դատճառ են դարձել:

Էլչիբեյի ջանքերն անցյալ մեկ տարվա ընթացքում բոլոր բնագավառներում արդյունք չտվեցին: Նա հասարակության խնդիրները լուծելու փոխարեն բազմաղատկեց ժողովրդի հոգսերը:

Հաղթական դատերազմը ԱԺՄ-ի ամենագլխավոր խոստումն էր: Ինչ վերաբերվում է տնտեսական վիճակին, աղա դեռ է ասել, որ Ադրբեջանին մեծ դժվարություններ են սպասվում: Առայժմ Ադրբեջանը գտնվում է սոցիալիստական տնտեսությունից ազատ շուկայական տնտեսության անցման նախնական փուլում, որն ուղեկցվում է բազում ոչ ճիշտ որոշումներով:

Ադրբեջանի նավթը 1940 թվականին ԽՍՀՄ-ում արտադրող նավթի 72 տոկոսն էր կազմում, իսկ 1990 թ. ընդամենը 1.2 տոկոսը: Այսօր էլ Թուրքիան եւ արեւմտյան ընկերությունները աշխատում են մնացած գազի եւ նավթի դաշարների արտահանման թույլտվություն ձեռքբերել:

Նավթարդյունաբերության, դողդոջի, խողովակաշինության եւ աղակու արտադրական միավորումները Ռուսաստանից կախվածության, տնտեսների աղաշնորհության դատճառով սնանկացել են եւ չեն կարող ինտեգրացվել Իրանի կամ Թուրքիայի արդյունաբերությանը, որոնցի նրանց կողմից հովանավորվեն: Ադրբեջանի գյուղատնտեսությունը, որն ազգային համախառն եկամտի 60 տոկոսն է կազմում, այսօր 1500 դեռական եւ կոլեկտիվ տնտեսություններում տիրող քաոսի դատճառով եւ դրանց կարճ ժամանակաընթացքում սեփականաշնորհման հնարավորության բացակայության հետեւանքով գյուղատնտեսական աղրանքների արտադրության մակարդակը խիստ իջել է: Այսօրվա դրությամբ Ադրբեջանը չի կարողանում իր ժողովրդին բավարարել գյուղատնտեսական մթերքներով: Վերջին 20 տարիների ընթացքում Ադրբեջանի ազգային համախառն եկամուտը կազմում էր ընդամենը Հայաստանի 50 տոկոսը, իսկ այսօր միջակ աղրող ինտանիքների ամսական եկամուտը 8-10 դոլար է:

Ազգաբնակչության գրագիտության 97 տոկոսը կարելի է Ադրբեջանի միակ ուժեղ կողմը համարել: Ադրբեջանում 20 բարձրագույն կրթական հաստատություն, 120 հազար ուսանող եւ 24 հազար գիտաշխատող կա: Սակայն արտադրության եւ գիտության միջեւ բացակայում է սկզբունքային կապը: Գիտելիքների եւ հետազոտությունների մակարդակը ցածր է եւ չի համադատասխանում արդի տեխնիկական եւ տնտեսական անհրաժեշտությունների դահանջին: Այդ է դատճառը, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները չեն կարող որեւէ հարց լուծել եւ բեռ են դարձել դետության ուսերին: Ուսումնական համակարգի վերակառուցումն արգելակող ուժերի առկայությամբ եւ անհրաժեշտ գիտելիքների բացակայությամբ անհնարին է դարձել:

Սումգայիթի բնությունը եւ Կասպից ծովի աղտոտությունը, ըստ որոշ մասնագետների, շատ ավելի մեծ աղետ է, քան Հայաստանի հետ դատերազմն է: Քաղաքում ծնված երեխաների 3/5-ը արատավոր է, որը վերջին 25 տարվա ընթացքում բնակչության համար մեծ դժբախտություն է համարվում: Բաքվի եւ Սումգայիթի նավթարդյունաբերությունը եւ քիմիական արդյունաբերությունը վերջին 30 տարվա ավերիչ գործունեության հետեւանքով աղակաել են Կասպից ծովի ջրերը եւ այսօր ասիճանաբար Իրանի ափերին են մոտենում, որի անցանկալի հետեւանքներն իրանական ափերին ադրողներին են անհանգստացնում: ԱԺՄ-ի կողմից այս հարցն էլ է անդատասխան մնացել: Իսկ իշխանությունն այդ խնդիրը կարգավորելու փոխարեն աշխատում է այն մոռացության տալ: Ինչ վերաբերվում է Ռուսաստանի խնդրին, դետք է նշել, որ 170 տարի ռուսական տիրապետության տակ լինելու վերավերանքը եւ հատկապես վերջին 70 տարվա ստալինյան դաժան եւ անբարոյական վարչակարգի տխուր հիշողությունները դեռեւս տանջում են մարդկանց:

Այսօր Ադրբեջանում կես միլիոնից ավել ռուսներ են ադրում, որոնք զբաղեցնում են կարեւոր դաշտոններ: Իսկ կառավարական հետազոտական օղակներում, ինչպես նաեւ բանակում ռուսական կողմնորոշում ունեցողների թիվը մեծ է: Ավելի քան 1 մլն դաղաստանցիներ են ադրում Ադրբեջանում: Ռուսաստանի հրահրումով նրանք ոտքի են կանգնում, ինքնավարություն դահանջում: Ռուսաստանն անբարոյ ցանկանում է իր ազդեցության որոշ մասը դահպանել Ադրբեջանում: Իսկ այն, որ Բաքուն հրաժարվեց ԱՊՀ անվտանգության դաշինքը ստորագրելուց, Ռուսաստանը ազատորեն չի ներում: Գլադստոնն ասել է. «Ռուսաստանն ունի մեկ արեւելյան կողմ, որ դեռի Արեւմուտք է նայում եւ մեկ արեւմտյան կողմ, որով այդ է ձգում Արեւելքի վրա»: Ուստի Ռուսաստանը երբեք չի հրաժարվի արեւելքում իր ազդեցությունից: Այս դատրում էլ, բացի հակառուսական կարգախոսների տարածումից, ոչինչ չի արվել, ոչ մի հարց չի լուծվել: Էլչիբեյի եւ նրա համախոհների հիմնական եւ լուրջ գործունեությունը կենտրոնացվել է Ադրբեջանի մշակույթի բարգացման, Թուրքիայի, Իսրայելի, ԱՄՆ-ի հետ համագործակցության վրա: Ադրբեջանում 6 հազար հրեաների գոյությունն Իսրայելի ուշադրությունն իր կողմն է գրավել: Թել-Ավիվը Վաշինգտոնի եւ Արեւմուտքի հետ ֆողկողքի Թուրքիային հովանավորում է Ադրբեջանում Իրանի ազդեցության դեմ դատնեբ ստեղծելու հարցում:

Թուրական գրելաձեւի ընդունումը, բարական «Ջումհուրիյեթ» եւ «Զաման» թերթերի հրատարակումը Բաքվում, բարձ զինվորական խորհրդականների ներկայությունը Ադրբեջանի բանակում, Ադրբեջանի բանակի սպաների ասիճանների նույնացումը բարականի հետ, Ա-բաքուրին անընդմեջ գովաբանումը, Թուրքիայի ֆաշիստների ղեկավար գնդաղետ Ալփասլան Թյուրքեշի ազատ գործունեությունը Բաքվում, ճնշում գործադրելը ընդդիմադիր այն ուժերի նկատմամբ, որոնք դեմ են անվերադատ Թուրքիայի հետեւից գնալուն, այս բոլորը քաղաքական դժգոհությունների եւ ընդհանուր ճգնաժամի եւ ԱԺՄ-ի շարքերում երկպառակության դատճառ են դարձել: Այնդես որ, Հեյդար Ալիեւի նման նախկին կոմունիստները դարձյալ սատարեց են իջել եւ այսօր ավելի քան 60 հազար մարդ ցանկություն է հայտնել համագործակցելու նրա նորաստեղծ «Նոր Ադրբեջան» կազմակերպության հետ:

Էլչիբեյը եւ ԱԺՄ-ն հայատյացությունը, բարքամետությունը եւ դանազգեղքը հեղինակություն եւ ուժ ձեռք բերելու միջոց են դարձրել, մոռանալով, որ Ադրբեջանի դժվարությունները եւ խնդիրները հակահայկական եւ բարական լուծում չունեն: Ռուսաստանին եւ նախկին կոմունիստներին հակադրվելը նույնդես ոչ մի հարց չի լուծում:

Այսօր Ադրբեջանի գլխավոր խնդիրներն են բարոյական անկումն եւ դեգրադացիայի անանախադեպ տարածումը, մարդասպանությունը, մաֆիական ավազակախմբերը, որոնք իրենց ցեղը տարածել են նախկին ԽՍՀՄ բոլոր երկրներում:

Ադրբեջանում ցանկացած հարց կարելի է վերածել դրամի: Պետական եւ մշակութային բոլոր դաշտոնները հետ ու հանգիստ առուծախի առարկա են: Մարդիկ դետական միջոցների չարաշահման դորտում մասնագիտացել եւ փորձառու են դարձել: Արտադրությունը եւ նրա կարաժամկետ ծրագրերը նրանց դար չեն գալիս: Մի դիտարդ, որը նոր է վերադարձել այնտեղից, նշել է. «Մարդիկ ուզում են միայն աշխատել եւ շատ սդառել, շատ հարստանալ, արեւմտյան ազատություն եւ բարդայականություն են ուզում, առանց Արեւմուտքի գիտակցությունը, բարդայականությունը եւ ստեղծագործական ուժն ունենալու: Ամեն ինչ անմիջապես են ցանկանում եւ ամեն ինչ դետությունից են դահանջում»: Արգենտինացի մեծ գրող Բորխեսը շատ դիպուկ է ասել. «Բոնապետական վարչակարգերը սդանում են, բանտարկում, տանջում ու ախտորում, սակայն նրանց ամենաանտանելի արարքը անբարոյականության եւ հանցավոր անդարմության տարածումն է»:

ԱԺՄ-ն իր կազմավորման հենց սկզբից Իրանի ադրբեջանցիների մոտ անջատողականության բորբոքումը իր նպատակն է համարել, այս ուղղությամբ ոչ մի ստիպ բաց չթողնելով: Իշխող ԱԺՄ-ի այս քաղաքականությունն Իրանի ազերիների, Իրանի ազգայնականների եւ Իրանի այլից չի վիրոել եւ նրանք բոլորն էլ շատ լավ են դա գիտակցում: Էլչիբեյը եւ ԱԺՄ-ն Իրանի օգնությունը եւ ոչնչացումը միաժամանակ են ցանկանում: Մի կողմից Իրանից տնտեսական եւ ռազմական օգնություն են հայցում, մյուս կողմից Իրանի մասնատման գաղափարը փայփայում: Բնական է, որ նման քաղաքականությունը չի կարող Իրանի հավանությունը ստանալ:

Պետք է խոստովանել, որ Իրանի քաղաքականությունը հայ-ադրբեջանական դատերազմի վերաբերյալ, հակառակ ԱՄՆ-ի եւ Իսրայելի քարոզչության, միանգամայն հեռու է արկածախնդրությունից: Խուսափելով հակահայությունից եւ չընդհարվելով ԱԺՄ-ի հետ, Իրանը հովանավորել է երկու հարեւան երկրների միջեւ խաղաղության փորձերը: Իրանը չի զլացել նաեւ սահմանափակ օգնություն հատկացնել Նախիջեւանին:

Սակայն Իրանի նման քաղաքականությունը չի համադատասխանում Իրանի ժողովրդի եւ հատկապես իրանցի ազերիների դատանեկան, մշակութային եւ կրոնական ընկալումներին: Գյանջայի, Բաքվի, Շիրվանի բնակչության վերաբերյալ: Երկրամասը, որը 200 տարի առաջ Իրանի բաղկացուցիչ մասն է կազմել եւ մեր մշակույթի եւ քաղաքակրթության հարատեւավոր երեւելիների ծննդավայրն է եղել, չի կարելի անդատասխան թողնել հայ ծայրահեղական զավթիչների եւ դանդարիզմի դեմ: Ղարաբաղի հայերի իրավունքներն իրենցավարություն, մշակութային եւ վարչական անկախություն ունենալու ընդունելի են, բայց Քելբաջարի եւ Ֆիզուլիի նկատմամբ կատարած ոտնձգությունները, որոնց հետեւանքով հազարավոր կին, երեխա եւ մեծահասակներ փախստական են դարձել, դատապարտված է եւ Իրանի դարտականությունն է, ինչ գնով էլ լինի, արգելակել այդ ագրեսիան: Ամերիկյան «Թայմ» շաբաթաթերթը տդագրել է ՄԱԿ-ի փախստականների հարցերի դատասխանատուներից մեկի՝ Պատրիկ Սմիթի տդավորությունները, որ մասնավորապես ասվում է. «Ազերի փախստականների մեջ ես տեսա կանանց եւ մայրերի, որոնց երեխաները գրից ու սովից մահացել էին, իսկ իրենք այդ դատճառով ինքնասպանություն էին գործել»: Պետք է Ղարաբաղի հայերի իրավունքները դատասխանելով խույս տալ հուզումների հորձանուտը գլորվելուց եւ դատարտել հայ ծայրահեղականների ագրեսիան:

Պատրաստեց
ԷՄՄԱ ԲԱԳՐՏՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Աշխարհ

ԳՆՉՈՒՆԵՐ. ԹԱՓԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Գնչուները (ընդհանուր ինքնանվանումը «ռոմ») ծագումով կաղված են հյուսիսարևմտյան Հնդկաստանի վաչկատուն ժողովուրդների հետ. նշվում է հայկական սովետական հանրագիտարանում: 5-10-րդ դդ. նրանք զանգվածաբար հեռացել են Հնդկաստանից, շարժվելով դեպի արևմուտք, ցրվելով ասիական, աղա նաև եվրոպական երկրներում: Պահպանելով ծագումնաբանական, լեզվական, կենցաղային եւ կրոնական զգալի ընդհանրություններ, գնչական ցեղերը միաժամանակ ընդօրինակել են տարբեր ժողովուրդների մշակութային շատ տարրեր (նաև կրոնը): Աշխարհում գնչուների ստույգ թիվը հայտնի չէ (մոտավորապես 12 միլիոն): Ներկայումս նրանք ոչվոր են, կիսաոչվոր կամ նստակյաց: Տղամարդիկ ավանդաբար զբաղվում են փայտամշակությամբ, կլայնկագործությամբ, մաղագործությամբ, զամբյուղագործությամբ, ձիաբույծներ են, ձիավաճառներ, նվագածուներ: Կանայք զբաղվում են ադրանֆտիխանակությամբ, փեռեզակությամբ, գուշակությամբ, մուրացկանությամբ: Գնչական լեզուն դասվում է նոր հնդկական լեզուների թվին: Հայերը գնչու են անվանում նաև հայախոս ֆրիսոնյա բոշաներին: Դեռ 1720-ական թթ. հիշատակվում են Կոնդի բոշաները:

Աշխարհի տարբեր երկրներում գնչուներին տարբեր անվանումներ են տվել: Հնդկաստանում նրանց կոչում են լոխարներ, նատեր. Միջին Ասիայում լյուլիներ, մազանգներ, ջուղիներ, Իրանում՝ դարաչիներ, Թուրքիայում՝ չինգենեներ, մյուրրեներ, Ռուսաստանում եւ առհասարակ Եվրոպայում՝ ցիգաններ եւ այլն: Ինչպես նշում է ֆրանսիական L'Express հանդեսը, գնչուները (ցիգանները) 13-րդ դարում հասել են Բոսֆորի նեղուցին: 13-14-րդ դդ. նրանք արդեն Բալկանյան թերակղզու երկրներում էին, որտեղից 15-րդ դարում Բոհեմիայի թագավորի հրավարակների շնորհիվ տարածվեցին ամբողջ Արևմտյան Եվրոպայում, իսկ 16-րդ դ. սկզբներին մուտք գործեցին Անգլիա, Սկանդինավյան ու Բալթյան երկրներ եւ Ռուսաստան: 17-րդ դ. նրանք հասան Ամերիկայի ափերին, իսկ 18-րդ դարում մտան Սիբիր:

Դարեր շարունակ գնչուները տարբեր երկրներում ենթարկվել են հալածանքների, ստրկացվել են, մեղադրվել գողության մեջ, ուղարկվել տաժանակիր աշխատանքի: Նրանց դատմության ամենադրերական էջը նացիստական ցեղասպանությունն է, որի ընթացքում բնաջնջվեց 200-400 հազար գնչու: Ֆրանսիայում 1940-1944 թթ. Վիշիի իշխանությունները ճամբարներում փակեցին 30 հազար գնչուներ, որոնցից ավելի քան 15 հազարը զոհվեց: Ներկայումս նախկին Հարավսլավիայի շուրջ 900 հազար գնչուներ եւս տուժում են միջհամայնքային դատերազմներից: Այժմ բազմաթիվ երկրներում ստեղծված են գնչուների իրավունքների դատպանության միություններ:

Եվրոպայում գնչական ժողովուրդները բաժանված են մի քանի ցեղախմբերի: Մանուշները կամ սինտեները ապրում են Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Հոլանդիայում, Բելգիայում: Հնդկական ծագում ունեցող «մանուշ» անունը նշանակում է «մարդ»: Մանուշների ենթախմբերն են վալսիկենները (Ֆրանսիայում), գաչկաները եւ դրայսիկենները (Գերմանիայում): Մանուշները զբաղվում են առեւտրով, երաժշտությամբ, զամբյուղագործությամբ, մետաղահավաքմամբ, աշխատում են կրկեսում: Ռոմ ցեղախումբը տարածված է գրեթե ամբողջ Եվրոպայում, առավելապես Ֆրանսիայում եւ արեւելաեվրոպական երկրներում: Գնչուների լեզվով «ռոմ» նշանակում է մարդ: Ռոմերին Եվրոպայում նաև կոչում են բոհեմացիներ, ռոմանիչելներ: «Բոհեմացի» անվանումը ժամանակին Արեւմտյան Եվրոպայում տարածված այն բյուր տեսակետի հետեւանքն է, թե գնչուները եկել են Բոհեմիայից (Չեխիայի հին անունը): Ռոմերը դաս զբաղմունքի Ֆրանսիայում կոչվում են լոմարներ (ձիավաճառներ), չուրաներ (կլայնկագործներ), կալդերաշներ (կաթսայագործներ): Երրորդ մեծ ցեղախումբը կազմում են ժիսանները կամ կալեները: Տարբեր երկրներում ժիսաններին անվանում են խիսանոս, ջիփսիզ, էժիֆտոս եւ այլն, որոնց իմաստն է «եգիպտացի»: Նկատի է առնվում Հունաստանի շրջաններից մեկը՝ Փոքր Եգիպտոսը, որտեղ երկար ժամանակ մնացել են ժիսանները: Նրանք ստորաբաժանվում են անդալուզյան եւ կաստալոնյան ենթախմբերի: Ապրում են Իսպանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում, Ֆրանսիայի հարավում: Զբաղվում են առեւտրով, մետաղահավաքմամբ, երաժշտությամբ, դարով, գլամարտով: Ինչ վերաբերում է ենիշների ցեղախմբին, որոնք անցյալ դարում զանգվածաբար գաղթեցին Ֆրանսիա, նրանք բուն իմաստով գնչու չեն եւ ունեն գերմանական ծագում: Ենիշների մեծ մասն զբաղվում է զամբյուղագործությամբ:

Գնչուների լեզուն ռոմանի չիբը հնդեվրոպական է, ծագել է սանսկրիտից, ինչպես հինդի, փենջաբի, ռաջասթանին: 10-րդ դարում ձեւավորված այդ լեզուն նոր միջավայրերում ճյուղավորվեց տարբեր բարբառների, որոնցից գլխավորներն են բալկանյանները (ազդվել են բուլգարերենից եւ բալկանյան լեզուներից), վալախականը (վալախ ժողովրդի անունից. կրել է ռումիներենի ուժեղ ազդեցությունը, տարածված է Վալախիայում, Մոլդովայում, Տրանսիլվանիայում), կարպատյանները (ազդվել են հունգարերենից եւ սլովակերենից), սինտոն (ազդվել է գերմաներենից, տարածված է Ֆրանսիայում եւ Իտալիայում): Իսպանիայում եւ Պորտուգալիայում տարածված է կալո բարբառը, որը վերածվել է ծածկալեզվի:

Մշակույթի բնագավառում հայտնի են գնչական դարերն ու երաժշտությունը: Մասնավորապես, ժիսանական ֆլամենկոն առավել արտահայտիչ ու դրամատիկ է. քան անդալուզյանը, եւ կրում է արաբական ու բյուզանդական ազդեցության կնիքը: Պարի աշխարհում հայտնի անուն է գնչուհի Բրիտինա Օյոսը: Կենտրոնական Եվրոպայի գնչական երգերն ու մեղեդիները նեռշնչանքի այրյուր են հանդիսացել Լիստի «Ռապսոդիաների» եւ Բրամսի «Հունգարական դարերի» համար: Ներկայումս հանրահայտ են կիթառահարներ Մանիսաս դե Պլատասը եւ Ջանգո Ռայնհարդը: Վերջինս այսպես կոչված մանուշական ջազի հիմնադիրն է: Կինոյի աշխարհում հայտնի են բենադրիչ Տոնի Գատլիֆը, դերասաններ Յուլ Բրիններն եւ Պաուլա Նեգրին:

Դարձյալ L'Express-ի տվյալների համաձայն (գնչուներին առնչվող բոլոր թվական տվյալներն մոտավոր են), ներկայումս Ֆրանսիայում բոլոր գնչուների 30 տոկոսն ապրում են ոչվորական, 25 տոկոսը՝ կիսաոչվորական կյանքով, իսկ 45 տոկոսն անցել է նստակեցության: Գնչուների 45 տոկոսը 16 տարեկանից փոքր է, 50-60 տոկոսը դպրոց է հաճախում: Չափահասների 70 տոկոսն անգրագետ է: Եվրոպայի երկրներում գնչուները տեղաբաշխված են քաս վերոբերյալ աղյուսակների:

Աղյուսակներից երեւում է, որ ամբողջ Եվրոպայում գնչուների թիվը մոտ 7,8 միլիոն է, քաս առում նրանց մեծ մասը՝ ավելի քան 5 միլիոնը, շարունակում է ապրել բալկանյան երկրներում եւ Թուրքիայում, այսինքն այն ավանդական ճամփաբաժանում, որտեղից դարեր առաջ ցրվել էր ամբողջ Եվրոպայում եւ Ամերիկայում: Կամա թե ակամա այն տղավորությունն է ստեղծվում, թե բարգավաճ գնչուներն, այնուամենայնիվ, չեն ձգտում շատ հեռանալ իրենց պատմական հայրենիքից՝ հյուսիսարեւմտյան Հնդկաստանից:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Աշխարհ

Ռուսաստանը հրաժարվում է ամբողջ սահմանի պաշտպանությունից

Ռուսաստանը հրաժարվում է ամբողջ սահմանի երկայնքով զորքերի ներկայությամբ պետական սահմանի պաշտպանության օժիտից: Այդ մասին հայտնեց Ռուսաստանի սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ-գնդապետ Վլադիմիր Շլյախտինը: Նրա խոսքերով, սահմանների պաշտպանության օժիտը կախված կլինի հարեւան պետությունների հետ Ռուսաստանի հարաբերություններից, դրանց ներքին իրադրությունից, ինչպես նաեւ այդ երկրների սահմանային հաղորդակցությունից: Շլյախտինն ասաց, որ ԽՍՀՄ տրոհումից հետո Ռուսաստանի մոտ 8000 կիլոմետր սահմանները փաստորեն մնացին անպաշտպան: Սահմանապահների թվակազմը կրճատվեց 30 հազարով, Ռուսաստանից դուրս հայտնվեց սահմանապահ զորքերի ունեցվածքի եւ ինժեներատեխնիկական սահմանային կառույցների մոտ 30 տոկոսը: Նա նշեց, որ 1992 թ. նկզբից սահմանապահները բռնել են 9000 սահմանախախտների, առգրավել մի քանի հազար միավոր հրազեն, 400 գ թմրանյութ եւ 2 միլիարդ ռուբլու մաքսանենգ ապրանք: Նրանք ավելի քան 100 անգամ մարտի մեջ են մտել սահմանախախտների հետ:

Սեւան

Սեւծովյան նավատորմ. Փոխզիջման բացակայություն

Սեւծովյան նավատորմում իրավիճակը հասնում է գագաթնակետին, իսկ փոխզիջումային լուծման հնարավորություններն աստիճանաբար սպառվում են: ԻՏԱ-ին տված հարցազրույցում այս կարծիքը հայտնեցին Ռուսաստանի զազմածովային ուժերի հրամանատարությանը մոտիկ կանգնած զինվորական մասնագետները: Նրանք մասնավորապես նշեցին, որ ուկրաինական կողմը սառեցրել է անցման ժամանակաշրջանում նավատորմի միացյալ հրամանատարություն ստեղծելու, նավատորմը ֆինանսավորելու հարցերում նկատված դրական տեղաշարժերը: Զինվորական մասնագետները նշում են նաեւ, որ Ուկրաինայի պաշտպանության նախարարությունը «աղեցուցիչ արագությամբ» հրամաններ է արձակում Սեւծովյան նավատորմի այն զորամասերի ու ռազմանավերի վերաբերյալ, որոնց անձնակազմի մի մասը երդում է տալիս Ուկրաինային: Մասնագետները ծանոթություն հայտնեցին Ուկրաինայի պաշտպանության նախարարության այն հայտարարությունների առթիվ, թե Անդրեեւյան դրոշներ պարզած ռազմանավերը կդիտվեն որպես օտար պետության նավեր եւ կարտաքսվեն Ուկրաինայի տարածային ջրերից, իսկ դրանց անձնակազմերը կզրկվեն Ուկրաինայի հպատակության իրավունքից: ԻՏԱ

ԱՊՀ. Առեւտրի սահմանափակումները կրճատվեն

ԱՊՀ անդամ պետությունների արտաքին տնտեսական գերատեսչությունների պետերը Ալմա-Աթայում երկուշաբթի օրն ավարտված խորհրդակցությունում ստորագրեցին մի շարք համաձայնագրեր, այդ թվում արձանագրություն սահմանային եւ ոչ սահմանային կարգավորման միջոցառումների հստակեցման ընդհանուր սկզբունքների մասին: Դրանով նախատեսվում են փոխադարձ առեւտրի հանգամանքային սահմանափակումների աստիճանական կրճատում, մասնավորապես եւ այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչում եւ դրանց հետագա միասնացում: Փաստաթղթում ընդգծվում է, որ արձանագրությունն ստորագրած երկրներին նախապատվություն է տրվում առեւտրում, ներմուծման մասնաբաժիններ չեն կիրառվում ԱՊՀ պետությունների ապրանքների նկատմամբ: Հայտարարվեց նաեւ, որ փաստաթուղթն ստորագրած երկրները միջոցներ կձեռնարկեն ԱՊՀ պետությունների ապրանքների նկատմամբ գործող արտահանական մաքսատուրքերն աստիճանաբար կրճատելու նկատմամբ: ԻՏԱ

Աշխարհ

Թուրքիան պարտավորված դաշնակից չէ ԱՄՆ-ի համար

Միացյալ Նահանգները Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ առանցքային տեղ ունեն: Դրա վառ ապացույցը թուրք-ամերիկյան ստրատեգիական պայմանագիրն էր, որ ստորագրվել էր 1991 թ. գարնանը: Պիտա 1993 թ. կնքերին ենք: ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս թուրք-ամերիկյան ստրատեգիական պայմանագրի կողքին հայտնվում է մի նոր պայմանագիր, որը գրանցվում է թուրք-ամերիկյան ստրատեգիական պայմանագրի օգնով: Կարծում ենք, Հայաստանի հանրապետության արտաքին քաղաքական առումով այդ զեկուցագիրը կարեւոր նշանակություն [illegible]: Հարկ ենք համարում այն բարգմանաբար ներկայացնել հանրությանը ուսումնասիրության: Ռ. Ղ.

[illegible] երկու երիտասարդ միջնադարյան [illegible] հարաբերությունների աշխուժացման [illegible] մար Վաշինգտոնը դիմի քաղաքական ակտիվ քայլերի: Սառը պատերազմի տարիներին բարեհաճակ այն տեսակետը, թե Թուրքիան հանդես է գալիս միմիայն ՆԱՏՕ-ի «առաջնագծի» ամրոցի դերում», ինչպես նշվում է զեկուցագրում, այսօր իրականությանը չի համապատասխանում եւ պետք ունենալով այն հանգամանքը, թե շրջանում իրենից դուրս գնելիությունը Թուրքիան մտնում է նոր առնչությունների մեջ, շեշտվում է իրատես մոտեցումների մշակման անհրաժեշտությունը: Ահա թե մասնավորապես ինչ տեսակետներ են արտահայտվում խնդրո առարկա զեկուցագրում. «Եթե Միացյալ Նահանգների վարչակարգը հոգ չտանի Թուրքիայի հետ փոխհարաբերություններն ավելի ամուր հիմքերի վրա դնելու մասին, աղա չարաչար կսխալվի: Իրադարձությունների զարգացումը նախկին Հարավսլավիայի տարածքում ու Լեռնային Ղարաբաղում Թուրքիային հանդիսանում է հանձնարարություն: [illegible]»:

ԱՄՆ-ը չթնկոտելով Թուրքիայի հեգեմոն ձգող կարեւորությունը, դժբախտաբար կրճատում է նրան տրվող ֆինանսական օգնությունը: «Ֆինանսական օգնության կրճատումը երկու երկրների փոխհարաբերությունների վրա բացասական է ազդելու: Այդ իսկ պատճառով, կրճատելով օգնության ուղղությունները, առեւտրական հնարավորությունների ոչնչի ոգեկոչված նոր ազգեցության ճանապարհներ անհրաժեշտություն է դառնում: Օրինակ, ԱՄՆ-ը բարելավու հանրապետությունների բնական գազը Թուրքիայի վրայով արտաքին աշխարհ դուրս բերելու հարցում պետք է ֆինանսական ներդրումներ անի: Բացի այդ, ԱՄՆ կողմից առեւտրի առավել բարենպաստ պայմանների արտոնության արժանացած երկրների շարքում Թուրքիային անհրաժեշտ է առաջնակարգ տեղ հատկացնել»: ■

Հայտարարություն, մայիս 14: Բիլ Քլինթոնի պահանջով ԱՄՆ պետքարտուղարության, Պենտագոնի, ԿՀՎ-ի եւ առեւտրի նախարարության համատեղ ջանքերով պատրաստված Թուրքիայի մասին զեկուցագրում արտահայտվում է հետեւյալ տեսակետը. «ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվող ֆինանսական միջոցների կրճատումը, նրա միջազգային ճանաչության տեւական աճի պայմաններում, վտանգավոր բնույթ է կրում: Ներկայիս վարչակարգն այլեւս Թուրքիային չպետք է դիտի որպես «պարտավորված դաշնակցի»: Ինչպես տեղեկացնում են, մանրամասն ձեւով պատրաստված այդ զեկուցագիրը ուղեցույցի դեր է կատարելու Բիլ Քլինթոնի թուրքական քաղաքականության համար եւ որոշվել է դրա ուսումնասիրության ավարտից հետո պետքարտուղար Ուորրեն Քրիստոֆերին ամենաուշը մինչեւ հունիսի սկզբները գործուղել Անկարա:

Զեկուցագրում ամերիկյան վարչակարգի ուշադրությունն է հրավիրվում այն հանգամանքի վրա, որ [illegible] ծրագրերի զարգացումը նախկին Հարավսլավիայի տարածքում ու Լեռնային Ղարաբաղում Թուրքիային հանձնարարություն հանձնելու վրա են»:

ԱՄՆ-ը չթնկոտելով Թուրքիայի հեգեմոն ձգող կարեւորությունը, դժբախտաբար կրճատում է նրան տրվող ֆինանսական օգնությունը: «Ֆինանսական օգնության կրճատումը երկու երկրների փոխհարաբերությունների վրա բացասական է ազդելու: Այդ իսկ պատճառով, կրճատելով օգնության ուղղությունները, առեւտրական հնարավորությունների ոչնչի ոգեկոչված նոր ազգեցության ճանապարհներ անհրաժեշտություն է դառնում: Օրինակ, ԱՄՆ-ը բարելավու հանրապետությունների բնական գազը Թուրքիայի վրայով արտաքին աշխարհ դուրս բերելու հարցում պետք է ֆինանսական ներդրումներ անի: Բացի այդ, ԱՄՆ կողմից առեւտրի առավել բարենպաստ պայմանների արտոնության արժանացած երկրների շարքում Թուրքիային անհրաժեշտ է առաջնակարգ տեղ հատկացնել»: ■

Լուրերի հոսք

Ռուսաստանը հրաժարվում է ամբողջ սահմանի պաշտպանությունից

Ռուսաստանը հրաժարվում է ամբողջ սահմանի երկայնքով զորքերի ներկայությամբ պետական սահմանի պաշտպանության օժիտից: Այդ մասին հայտնեց Ռուսաստանի սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ-գնդապետ Վլադիմիր Շլյախտինը: Նրա խոսքերով, սահմանների պաշտպանության օժիտը կախված կլինի հարեւան պետությունների հետ Ռուսաստանի հարաբերություններից, դրանց ներքին իրադրությունից, ինչպես նաեւ այդ երկրների սահմանային հաղորդակցությունից: Շլյախտինն ասաց, որ ԽՍՀՄ տրոհումից հետո Ռուսաստանի մոտ 8000 կիլոմետր սահմանները փաստորեն մնացին անպաշտպան: Սահմանապահների թվակազմը կրճատվեց 30 հազարով, Ռուսաստանից դուրս հայտնվեց սահմանապահ զորքերի ունեցվածքի եւ ինժեներատեխնիկական սահմանային կառույցների մոտ 30 տոկոսը: Նա նշեց, որ 1992 թ. նկզբից սահմանապահները բռնել են 9000 սահմանախախտների, առգրավել մի քանի հազար միավոր հրազեն, 400 գ թմրանյութ եւ 2 միլիարդ ռուբլու մաքսանենգ ապրանք: Նրանք ավելի քան 100 անգամ մարտի մեջ են մտել սահմանախախտների հետ:

Սեւան

Սեւծովյան նավատորմ. Փոխզիջման բացակայություն

Սեւծովյան նավատորմում իրավիճակը հասնում է գագաթնակետին, իսկ փոխզիջումային լուծման հնարավորություններն աստիճանաբար սպառվում են: ԻՏԱ-ին տված հարցազրույցում այս կարծիքը հայտնեցին Ռուսաստանի զազմածովային ուժերի հրամանատարությանը մոտիկ կանգնած զինվորական մասնագետները: Նրանք մասնավորապես նշեցին, որ ուկրաինական կողմը սառեցրել է անցման ժամանակաշրջանում նավատորմի միացյալ հրամանատարություն ստեղծելու, նավատորմը ֆինանսավորելու հարցերում նկատված դրական տեղաշարժերը: Զինվորական մասնագետները նշում են նաեւ, որ Ուկրաինայի պաշտպանության նախարարությունը «աղեցուցիչ արագությամբ» հրամաններ է արձակում Սեւծովյան նավատորմի այն զորամասերի ու ռազմանավերի վերաբերյալ, որոնց անձնակազմի մի մասը երդում է տալիս Ուկրաինային: Մասնագետները ծանոթություն հայտնեցին Ուկրաինայի պաշտպանության նախարարության այն հայտարարությունների առթիվ, թե Անդրեեւյան դրոշներ պարզած ռազմանավերը կդիտվեն որպես օտար պետության նավեր եւ կարտաքսվեն Ուկրաինայի տարածային ջրերից, իսկ դրանց անձնակազմերը կզրկվեն Ուկրաինայի հպատակության իրավունքից: ԻՏԱ

ԱՊՀ. Առեւտրի սահմանափակումները կրճատվեն

ԱՊՀ անդամ պետությունների արտաքին տնտեսական գերատեսչությունների պետերը Ալմա-Աթայում երկուշաբթի օրն ավարտված խորհրդակցությունում ստորագրեցին մի շարք համաձայնագրեր, այդ թվում արձանագրություն սահմանային եւ ոչ սահմանային կարգավորման միջոցառումների հստակեցման ընդհանուր սկզբունքների մասին: Դրանով նախատեսվում են փոխադարձ առեւտրի հանգամանքային սահմանափակումների աստիճանական կրճատում, մասնավորապես եւ այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչում եւ դրանց հետագա միասնացում: Փաստաթղթում ընդգծվում է, որ արձանագրությունն ստորագրած երկրներին նախապատվություն է տրվում առեւտրում, ներմուծման մասնաբաժիններ չեն կիրառվում ԱՊՀ պետությունների ապրանքների նկատմամբ: Հայտարարվեց նաեւ, որ փաստաթուղթն ստորագրած երկրները միջոցներ կձեռնարկեն ԱՊՀ պետությունների ապրանքների նկատմամբ գործող արտահանական մաքսատուրքերն աստիճանաբար կրճատելու նկատմամբ: ԻՏԱ

digitised by A.R.A.R.@

Շուրջ Հոսք

1 մլն ստորագրություն ի նպաստ «խորհրդային սահմանադրության»

Ընդդիմադիր ուժերը 1 մլն 100 հազար ստորագրություն են հավաքել «խորհրդային սահմանադրության» նախագծի ընդունման հարցի աբիվ հանրաքվե անցկացնելու համար: Այս մասին Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց Ռուսաստանի կոմկուսի ղեկավար Գենադի Զյուգանովը: Նրա խոսքերով, կոմունիստներն առայժմ մտադիր չեն օգտագործել այդ տարբերակը, հուսալով, որ իրենց նախագիծը կմնարկվի սահմանադրական խորհրդակցությունում: Ինչպես ասաց Գ. Զյուգանովը, շաբաթ օրը Մոսկվայում կայացած կոմկուսի կենտգործկոմի պլենումը որոշել է քաղաքական անհնազանդության քայլեր ձեռնարկել, եթե հանգումարը շրջանցելով նոր սահմանադրության ընդունման փորձ արվի: Միաժամանակ նա խոստովանեց, որ ընդդիմությունն առայժմ տարանջատված է: «Եթե ծախ ուժերը միասնական լինեին, վարչակարգի սանձահարումը մեկ շաբաթվա գործ կլիներ», հայտարարեց նա: ԻՖ

Ռուցկոյ. Ռուսաստանին սպասում է ԽՍՀՄ ճակատագիրը

Ալեքսանդր Ռուցկոյը հայտարարեց, որ այսօր պետությունը կառավարում է ոչ թե նախագահը, այլ նրա շրջապատը: Երկուշաբթի օրը Մոսկվայի Կիևյան շրջանի հանրության հետ կայացած հանդիպման ժամանակ նա նշեց, թե նախագահի շրջապատը «հրամանագրեր է թխում, բայց ոչնչի համար պատասխանատվություն չի կրում»: Փոխնախագահի կարծիքով, կառավարության գործողությունները կարող են հանգեցնել այն բանին, որ Ռուսաստանը կարժանանա ԽՍՀՄ ճակատագրին եւ «կտրուկի 130-140 իշխանադեղությունների»: Ա. Ռուցկոյի խոսքերով, նախագահ Բորիս Ելցինը ձգտում է երկրին պարտադրել «միանգամայն ավելորդ» նոր սահմանադրության նախագծի ընդունումը, որ-ինչպես պատասխանատվությունից խուսափի երկրի փլուզման, համաժողովրդական սեփականության «հանձնված կողոպտման» համար, որը տեղի է ունենում բարեփոխումների կարգախոսներով: Փոխնախագահը հավաստեց, որ ինքը ելը հանդես է խորհրդարանի եւ նախագահի անհաղթահարելի վերընտրությունները: Փոխնախագահը այն կանխատեսումն արեց, թե առաջիկա շաբաթներին նավթամթերքների գների արձակման պատճառով սննդամթերքների գները կբարձրանան 70-120 տոկոսով: ԻՖ

Եւս մեկ ավտոգործարան Տոլյատիի մոտ

Մոտ ժամանակներս Սամարայի մարզում, Տոլյատիից ոչ հեռու կհայտնվի եւս մեկ ավտոգործարան: Մարզի վարչակազմի ղեկավար Կոնստանտին Տիտովի խոսքերով, գործարանը կլինի բաժնետիրական ընկերություն, որի մեջ վոլգայան ավտոգործարանից բացի կմտնեն քաղաքի խոշորագույն ձեռնարկություններ: Դրա շինարարության համար կառավարությունը 2 միլիարդ [illegible] դոլարային վարկ է խոստացել ձեռնարկատիրության խրախուսման միջազգային միության հաշվին: Գործարանը տարեկան պետք է թողարկի 330 հազար ավտոմոբիլ, որոնք «Նիվայի» անցունակությունը կհամատեղեն «ժիգուլու» 9-րդ մոդելի հարմարավետության հետ: Մարտ

Վարկեր «Ջեներալ մոթորզի» համար

«Ջեներալ մոթորզ» կորպորացիան 118 բանկերի ղեկավարության հետ համաձայնության է եկել իրեն 20,6 մլրդ դոլար վարկ հատկացնելու մասին: Ինչպես հաղորդել է Ասոշիեյթդ պրես գործակալությունը, այդ համաձայնագրի շնորհիվ ամերիկյան ավտոմոբիլաշինական կորպորացիան եւ դրա ֆինանսական մասնաճյուղերն ամրապնդում են իրենց հնարավորությունները ԱՄՆ-ում եւ Արեւմտյան Եվրոպայում փոխադարձությունների սպասման բնագավառում: ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Մեկնույթ

Նա սկսվում է ամեն անգամ, նա շարունակվում է ամեն օր

Չորս տարի շարունակ Վլադիմիր Աբաջյանը որոնում էր Վլադիմիր Աբաջյանին: Վերջինս չկար: Մոռացել էր անելիքը: Թատրոնում չէր, որովհետեւ բատրոն չկար: Արվեստի ժամանակներ չէին: Բոլորս քաղաքականություն էինք սարքում, քաղաքականություն էինք խաղում կոշկակար թե բանաստեղծ: Իսկ ավելի համեստ լինելիս, կոռոդեռասիվ էինք բացում կամ «սեղանիկ» դնում: Վլադիմիր Աբաջյանն այդ բաներում էլ չէր, որովհետեւ... «Խանութ գնալ չեմ սիրում, առեւտուր անել չեմ սիրում: Գլուխս չեմ հանում: Ինձ հեշտությամբ են խաբում»:

Ինքն իր համար, իր մեջ ամփոփված, բանաստեղծություններ էր արտասանում կիսաձայն: Նրա բանաստեղծությունը լսում էին կինը՝ տիկին Նելլին, աղջիկները՝ Նանարն ու Լիլիթը, լսում ու ցավ էին զգում դարաղ մնացած իրենց հրաշալի ամուսնու եւ հոր համար: Չմեռ էր: Պաղ փողոցներում եւ ցուրտ տների մեջ մարդիկ խոսելու, աթոռի, առնելու, վաճառելու, հացի ու անեծքի երկար մի հերթ էին կանգնել: Վլադիմիր Աբաջյանն այդ հերթում չկար, որովհետեւ այս բաներից իրեն ոչ մի բան պետք չէր: «Ո՞ւր ես, ի՞նչ ես անում», ինքն իրեն հարց էր տալիս: Ու որդեսզի չմեռնի դարաղությունից, որդեսզի ոչինչ ու ոչ մեկին չմեռցնի, «Համլետ» էր կարդում: Մի դերասանով «Համլետ» էր բեմադրում: Հիմա այդ բեմադրության փորձերն ավարտել է: Ունկնդիր պետք է լինի: Ու կլինի, որովհետեւ արտիստը կարող է անէանալ մի որոշ ժամանակով, իսկ ընդհանրապես անկարելի է: Վլադիմիր Աբաջյանը՝ հատկապես:

«Այս գործն ասես իմ պատվերով գրված լինի: Ես միշտ ցանկացել եմ ստեղծել մի կերպար, որի մեջ մարմնավորված լինեն մի քանի կարեւոր, հուժկու կերպարներ: «Կարաղի երգը» տալիս է այդ հնարավորությունը: Ափսոս միայն, որ հեռուստատեսային բեմադրությունը չհաջողվեց: Տարիներ առաջ ես Ռուբեն Զարյանին ներկայացրի «Համլետի» իմ վարկածը: Վարդեսը հավանեց եւ խորհուրդ տվեց առավել խիստ դարաղել, առավել մոտենալ այդ հսկա կերպարին: Ես կարծում եմ, որ այժմ արդեն կարող եմ առանց տագնապի ու վախի ներկայացնել հանդիսատեսի դատին: Ես ասելու բան ունեմ»:

Մենք զրուցում էինք Իրանի Իսլամական Հանրապետություն եւ Ա-



ռաբական Միացյալ Էմիրություններ կատարած նրա վերջին այցելությունից հետո, որի ժամանակ Հովհաննես Բաղալյանի հետ Վլադիմիր Աբաջյանը երկու ամսում 25 համերգներկայացում տվեց: Թեհրան, Սպահան, Շիրազ, այնուհետեւ՝ Էմիրությունների Դուբայ, Շարժա, Աբու-Դաբի քաղաքները... Երեւանում նորերս հիմնադրված Ստանիսլավսկու եւ Վախթանգովի հիմնադրամի գործունեության առաջին քայլերից էր այդ հյուրախաղերի կազմակերպումը. հիմնադրամ, որի աշխատանքները ղեկավարում է դրամատուրգ Ռաֆայել Հակոբջանյանը:

«Այս հյուրախաղերն ինձ արթնացրին քառամյա քնից, ասաց Վլադիմիր Աբաջյանը: Շնորհակալություն եմ ուզում հայտնել Իրանի ազգային եւ մշակութային միությանը, մեծագույն հայասեր Մասիս Մաթյանին, նրանց, ովքեր եկան մեր համերգներին, նրանց, ովքեր մեզ ստիպեցին անգամ բոիչից անմիջապես առաջ մի ներկայացում էլ տալ: Այս երկրներն արդեն դաստերազմներ չունեն, այս երկրները արվեստի համը չեն մոռացել: Ասված տա, մեր այդ ժամանակները նույնպես մոտենան, որովհետեւ համոզված եմ, հայն առանց գիրի գրականության, առանց բատրոնի, առանց արվեստի աղրել չի կարող»:

«Աշխարհի մեծագույն մարդկանցից մեկը Վահրամ Փափազյանն էր՝ լուսավոր ուղեղի տեր, դայմանականություններից լիովին ազատ մի մարդ: Նա ֆիզիկոս է, քիմիկոս, լեզվաբան, հոգեբան, բժիշկ... Նա մարդուն վերծանել է ամեն ինչով: Նրա ասած ամեն մի խոսքը, ամեն մի միտքը, ձեռքի կամ դեմքի ամեն մի շարժումը մեծ իմաստություն ուներ իր մեջ»:

«Մեր զույցն այս անգամ զուգադիպել էր Վլադիմիր Աբաջյանի նոր ավարտված հյուրախաղերին: Մեր զույցն այդ առիթով չէր: Զույց էր, որի սկիզբն արդեն կա եւ այսուհետեւ երկար է շարունակվելու: Եւ հենց այս դատճառով հյուրախաղերի թեման միջակետվեց այնտեղ, որ դատմվում էր նկարվելու ու համբուրվելու համար գուցե իրենց նմանակը չունեցող դարսիկներով. Էրեբայի Իրանի մշակույթի նախարարության եւ կանանց դարի տարբ ունեցող դարսկական դալատների ու խրճիթների նկարագրությամբ... Խոսքը նորից գնաց Սեւակի, Տերյանի, Մեծարենցի, Նարեկացու, ասածն մասին, գնաց հասավ խորհրդավոր ընթրիին, Հիսուս Քրիստոսին եւ Հուդա Իսկարիովացուն, մարդկային բնավորության բացահայտման մեծագույն շափանիշներին:

«Ինձ համար մեծագույն կերպար է Հիսուս Քրիստոսը: Ես մարդու այդ տեսակն եմ նախընտրում: Սակայն անչափ խորհրդավոր է խորհրդավոր ընթրիքի դատմությունը: Ինչո՞ւ է այն կատարվում, ի՞նչ նպատակով: Հուդային ինչո՞ւ է Քրիստոսը շարացնում (Հուդային Քրիստոսը շարացնո՞ւմ է): Ինչո՞ւ է շարացնում»:

Մարդուն շարացնելու համար քիչ բան է պետք. նրան մի վատ խոսք ասա, նրա ասածին ու արածին մի հավատա, նրա մեջ մի որոնիր լույսը, նրա մաքուր տան մեջ կեղտոտ շորեր եւ դարտֆագուցակներ միայն փնտրիր... եւ մարդուն, ահա, շարացրիր: Վլադիմիր Աբաջյանին նույնպես փորձել են իրենց սղոցաքարերով անցկացնել, նույնպես փորձել են շարացնել, հատկապես մինչեւ 1976 թվականի օգոստոսի 20-ը, երբ, դատահում էր, ընկերներին, ազնիվ բարեկամների հետ մեկերկու բաժակ օղի կամ գինի էր խմում: Փառք Վլադիմիր Աբաջյանին, որ չշարացավ: Փառք նաեւ նրա կնոջը՝ տիկին Նելլիին, որը նրան չշարացրեց, երբ մի թեթեւ խումհարի մեջ էր լինում: «Նա իմ ամուսինն է եւ Վլադիմիր Աբաջյանն է»: Փառք կնոջ այդ տեսակին: Բախտավոր մարդ ես, Վլադիմիր Աբաջյան: Եւ քանի որ ամենակարեւոր տեղում բախտավոր ես, ադա հավատում եմ, որ անդայման մոտ ժամանակներս մեզ կներկայացնես Համլետի քո վարկածը եւ կրկին կթեմադրես (այս անգամ միայն ինքդ) Չեխովի «Կարաղի երգը», այնդիսի մի երգ, որը քեզ եւ ոչ էլ մեզ համար կարաղի երգ չի լինի, այլ Վլադիմիր Աբաջյանի դատմության մի նոր էջը միայն:

Մեզանից ամեն մեկն ունի նվիրական ու բանկ խոսք, ասելու կարեւոր մի բան: Վլադիմիր Աբաջյանի դարագայում այն առավել եւս կարեւոր է:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

Շախմատային հանդիպումներ Աթենքում

Մեր թերթն իր նախորդ համարում արդեն գրել է Հունաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ, շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) գլխավոր քարտուղար Գեորգիոս Մակրոդուլոսի հրավերով Հայաստանի շախմատային ֆեդերացիայի դատվիրակության քարտուղար, «Շախմատային Հայաստան» հանդեսի գլխավոր խմբագիր Գագիկ Հովհաննիսյանի Աթենք կատարած մեկշաբաթյա դատասնական այցի առաջին կեսի մասին:

Հայաստանի դատվիրակի այցի երկրորդ կեսը նվիրված էր Հունաստանի շախմատային ֆեդերացիայի ղեկավարների հետ բանակցություններին: Գեորգիոս Մակրոդուլոսն ու Գագիկ Հովհաննիսյանը ստորագրեցին դայմանագիր, որով նախատեսվում են երկու երկրների հավաքականների, անհատ շախմատիստների, մարզիչների, կազմակերպիչների դարբերական փոխայցելություններ, շախմատային լրատվության փոխանակում, համագործակցություն ՖԻԴԵ-ի շրջանակներում: Մասնավորապես արդեն մոտակա շաբաթների ընթացքում Հայաստանի երկու պաշտպան տղամարդ շախմատիստներ եւ աշխարհի աղջիկների չեմպիոնուհի Էլինա Դանիելյանը կմասնակցեն Հունաստանի վեց քաղաքներում անցկացվելիք միջազգային մրցաշարերին: Տարեվերջին Աթենք բարեկամական մրցախաղի կմեկնի Հայաստանի հավաքականը:

Համաձայնություն ձեռք բերվեց նաեւ Հունաստանի շախմատային կյանքին տեղի հայ գաղութի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության մասին: Ի դեմ, այժմ Աթենքի հայկական ակումբներից մեկում երեխաների հետ դատարդություններ է վարում դարապ անցյալում Հայաստանի ուժեղագույն շախմատիստուհիներից մեկը՝ Մերի Մանգդանը: Շատ օգտակար գործ կարող է անել նաեւ երիտասարդ ու եռանդուն աթենքցի Արմեն Մանուկյանը, որն օրեր ընթացքում Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահության անդամ: Ուրախալի է, որ Հունաստանը ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Գերմանիայից հետո արդեն չորրորդ երկիրն է, որ Հայաստանի շախմատային կազմակերպությունն ունի իր դատասնական ներկայացուցիչը: ■

Արտաքես Մինասյանը Նյու Յորքի փոխչեմպիոն

Երեւանցի գրոսմայստեր Արտաքես Մինասյանը մի քանի շաբաթով մրցություններ է մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Հայաստանի չեմպիոնը նախ մասնակցեց Նյու Յորքի բաց առաջնությանը: Մինչեւ վերջին տուրը Մինասյանը գլխավորում էր ադյուսակը: Եզրափակիչ խաղը էստոնացի գրոսմայստեր Յան Էլվեսի հետ անգամ ոչ-ոքի ավարտելու դեպքում Արտաքեսը կբաժաներ առաջին տեղը: Սակայն ձգտելով միանձնյա շահել մրցաշարը, երեւանցին երկու անգամ մերժեց մրցակցի առաջարկած հաշտությունը, ադա սխալվեց եւ դարտվեց: Մրցաշարում հաղթեց Էլվեսը, իսկ Մինասյանը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ միայն կես միավոր զիջեց առաջին մրցանակակրին:

Այժմ Արտաքեսը ելույթ է ունենում Լաս Վեգասում անցկացվող խոշոր միջազգային մրցաշարում: Իսկ օրագայությունն ԱՄՆ-ում նա կավարտի Ֆիլադելֆիայի մրցաշարով: ■

Խաղարկվում է գավաթը եւ 200 հազար ռուբլի

Տիգրան Պետրոսյանի անվան Հայաստանի շախմատիստի կենտրոնական տանն անցկացվեց հանրապետության առաջ շախմատի 1993 թվականի գավաթի խաղարկության յոթ մրցախաղերից երկրորդը: 112 մասնակիցներից գերազանց հանդես եկավ վարպետության թեկնածու Նորայր Քալանթարյանը, որը 9 հնարավորից վաստակելով 8 միավոր, նվաճեց առաջին մրցանակը: Հաղթողը կեսական «քայլով» առաջ անցավ մոտակա մրցակիցներից՝ միջազգային վարպետ Ասոն Ա-նանասյանից եւ վարպետության թեկնածու Արտաքես Սեդրակյանից:

Այս փուլից հետո խաղարկությունում առաջից է ընթանում Քալանթարյանը, որը առաջին մրցաշարում Անանասյանի հետ կիսել էր հաղթանակի քաղցրությունը: Մեր ճանաչված գրոսմայստերներն առայժմ համեստ դիրքեր են գրավում:

Գավաթի համար մղվող դայքարում վիճարկվում է հայկական շախմատի համար աննախադեպ գումար՝ ընդհանուր առմամբ 200 հազար ռուբլի, որը սահմանել է հովանավորը՝ «Առագաստ-Բ» ընկերությունը:

Հայաստանի առաջ շախմատի գավաթի խաղարկությունն ընթանում է երկրորդ անգամ: Անցյալ տարի անդրանիկ գավաթակիր դարձավ Անանասյանը:

Գ.Հ.

Առաջատարները խիտ դասավորությամբ

բարձրագույն խմբի
2-րդ առաջնություն
7-րդ տուր

«Վան»-«Ցեմենտ» 3-0
«Բանանց»-«Քասախ» 13-1
«Իմդուլս»-«Ձվարթնոց» 3-0

Հաջորդ տուրը սկսվելու է հունիսի 4-ին: Մեծ հետաքրքրություն է առաջացնում առաջատարներից երկուսի՝ «Վանի» եւ «Բանանցի» մրցավեճը: Խաղն ուրբաթ օրը տեղի կունենա Երեւանի «Նաիրի» մարզադաշտում եւ կսկսվի ժամը 18-ին: Սդասվում է համառ եւ անզիջում դայքար: ■

Մրցաշարային աղյուսակը
հունիսի 2-ի դրությամբ

		Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1	Բանանց	10	6	5	0	1	28-3
2.	Վան	10	6	5	0	1	24-5
3.	ՀՄԸՄ	10	5	5	0	0	13-1
4.	Արարատ	9	5	4	1	0	16-2
5.	ՀՄՄ-ՖԻՄՄ	7	6	3	1	2	15-8
6.	Շիրակ	6	4	3	0	1	13-2
7.	Իմդուլս	6	6	3	0	3	11-15
8.	Երազանք	6	6	2	2	2	8-7
9.	Ցեմենտ	6	7	2	2	3	6-13
10.	Կանաչ	5	6	2	1	3	8-14
11.	Ձվարթնոց	5	8	2	1	5	7-14
12.	Նաիրիտ	4	7	1	2	4	3-14
13.	Քասախ	3	6	1	1	4	5-29
14.	Կոտայք	2	6	1	0	5	5-14
15.	Մալաթիա-Կ.	1	6	0	1	5	1-24

Բաժինը վա[illegible] է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Գյումրի

ՀԻՆԳ ԴԵՍԱՆՏԱՅԻՆՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԿՀԱՍՑՎԻ ԱՎԱՐՏԻՆ

Հայաստանի դատական իշխանությունները մտադիր են ավարտին հասցնել 1992 թ. հունիսի 10-ին Գյումրիում ռուսաստանցի 5 դեսանտայիններ սպանության գործը եւ հանցագործներին դատել օրենքի ողջ խստությամբ: Այդ մասին ԻԴ-ին հայտարարեց Հայաստանի գլխավոր դատախազ Արտավազդ Գեւորգյանը: Նա հերթեց «Սովետսկայա Ռոսիա» թերթում մայիսի 18-ին տպահայված այն ոլորումները, թե Հայաստանում գործը դիտավորյալ ձգձգվում է: ԻԴ-ին տրամադրված տեղեկությունների համաձայն, Հայաստանում որոնվում են այդ գործով մեղադրվող ինքնաղաբեղանության ջոկատի մարտիկներ Սարգիս Նասիբյանը եւ Ցոլակ Ռոբյանը: Նրանք մեղադրվում են ծանրացուցիչ հանգամանքներով կանխամտածված սպանության մեջ: Նրանք կարող են դատվել 8-15 տարի ազատազրկմամբ կամ մահապատժով: ԻԴ

Զորքեր

Գիտակները խաղաղ բնակիչներին

Գորիսի երջանային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում պառկած է տկանցի դայրությունից ծանր վիրավոր Սաբա Մանոխինը: «Ազգի» թղթակիցը հանդիպեց վիրավոր ռուս զինվորին, որը նա հաղորդեց հետեւյալը. «Քելբաջ[illegible]

Մեր[illegible]գյուղի սահմանում, 10 կմ մինչեւ [illegible]սխան փոսի մեջ հայտնվեցինք 30-ից ավելի հայերի [illegible], ամենամասնությամբ կանայք եւ երեխաներ: Ինձ հաջողվել է [illegible]ցել մի քանի փաստաթղթեր. [illegible] Սարգսյան, 1963 թ. [illegible]յան (անունը ջնջված է), [illegible] (երկուսն էլ Մարտակերտի [illegible]): Որ դրանք փոխստանման[illegible]ներ են, վկայում են դա[illegible]մանատար Վոլոդիկ Մաթ[illegible] ծառայող Զինգլե Յոգան [illegible]ը:

[illegible]: 3 անհայտ անձինք կո[illegible] նրան տանկով 5000 ա[illegible] դոլլար, արտասահման[illegible]ախցիկ եւ նկարահանված արտեֆակտներ տեսաժապավենների: Գողության մոտավոր գումարը 7,5 մլն. ռուբլի է:

ՆԳ բաժնից հաղորդում են, որ ձեռնարկվել են միջոցառումներ հանցագործությունը բացահայտելու նպատակով: ■

Հարգելի ծնողներ

Եթե ձեր երեխան տառադրության խոսնիկական տոնգիլիտով (հա[illegible]կի անգինաներ) սիրտ [illegible] համակարգի, շնչուղիների, [illegible] շարժական աղարտաի հիվ[illegible]թյուններով ավանդական եւ [illegible] վանդական մեթոդներով (դեղ[illegible] սաբուժություն, ասեղնա[illegible]թյուն, մերսում, ջրաբուժում, [illegible]ժումնաբուժում, էլեկտրո- եւ [illegible]բուժում, բուժում գերծայնա[illegible]ման բարձր մակարդակ է եւ [illegible]վորում Մանկական վիրա[illegible]ական կենտրոնը:

ԲՈՒԺՈՒՄԸ [illegible] է

Տեղեկություններ [illegible] Հին էջմիածնի [illegible] վային ավտոկայանից [illegible]

Հեռ. 56-21-71, 56-04-20

Ուշադրություն

Հունիսի 6-ին, կիրակի օրը ժամը 12-ին «Այրարատ» («Ռոսիա») կինոթատրոնի միջին դահլիճում տեղի կունենա «Ալաշկերտ» հայրենակցական-բարեգործական միության անդրանիկ հավաք-հանդիպումը:

Նախկին ալաշկերտցիների, նրանց արյունների ներկայությունը ցանկալի է:

«Ալաշկերտ»

Հ/Բ [illegible]

[illegible]ՆՈՒՇԱԳԻՐ» [illegible]ում է [illegible]er ըստ [illegible]

[illegible]

[illegible]

Հեռ. (8-17-22) 34-[illegible], 81-81-95

ՄԻՄԻՐ

«Միմիր» բիզնես լեզվի կենտրոնը ցանկացողներին հրավիրում է սովորել

անգլերեն	ճապոներեն	հունարեն
ֆրանսերեն	իսպաներեն	բուլգարերեն
գերմաներեն	պարսկերեն	լեհերեն

Գործարար մարդկանց համար կազմակերպվում է հատուկ դասընթաց՝ բիզնես անգլերեն, որն ավարտողներին տրվում է համապատասխան վկայական:
Կենտրոնում ընդունվում են թարգմանություններ դասվերներ նշված լեզուներից:

Ձեր մասնիմալ շահագրգռվածությունը եւ մեր բանիմացությունը Ձեր նպատակը իրականանալի կդարձնեն:

ՄԵՐ ՀԱՍՑԵՆ. ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂ. 46, ՀԵՌԱԽՈՍ 25-30-01

Բրազիլական ռազմօդանավեր Ֆրանսիային

Բրազիլական «Էմբրա էր» ընկերության «Տուկանո» ռազմավարժական առաջին երկու ինքնաթիռները Սան Պաուլուից թռել են Ֆրանսիա, հաղորդեց Բրազիլ գործակալությունը: Այսպիսով, սկսվել է 80 մեքենայից բաղկացած առաջին խմբաթանակի մատակարարումը Ֆրանսիայի ռազմաօդային ուժերին: Նախատեսված է հելիոսի առաքել այդ ինքնաթիռների երկրորդ խմբաթանակը 20 ռազմօդանավ: Նախքան Ֆրանսիայի ռազմաօդային ուժերի կազմի մեջ մտնելը, մի քանի «Տուկանոներ» կմասնակցեն Բոսնիայում կազմակերպվող օդային զերական տեխնիկայի միջազգային ցուցահանդեսում:

Ինքնաթիռների հանձնումը տեղի է ունենում մի քանի տարի առաջ երկու երկրների կառավարությունների կնքած համաձայնագրին համապատասխան: Բրազիլական կողմը պարտավորվել է Ֆրանսիային վաճառել «Տուկանոներ» եւ գնել թեթեւ ուղղաթիռների խմբաթանակ: Դրանցով արդեն սպառազինվում են առավելապես Ամազոն գետի երջանում տեղաբաշխված բանակի եւ ռազմաօդային ուժերի ստորաբաժանումները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՍԱՅ-ՏԱՍՍ

Զորքեր

Կողոպտվել է ֆրանսահայ լրագրողը

Գորիսի ավտոկայանի մերձակայքում ֆրանսահայ լրագրող Լեո Նիկոլյանին է մոտեցել առանց պետհամարանիշի «Ժիգուլի» մակնիշի

«ԿԱՊՐՈԼԻՏ» ֆիրման եւ «ԲԻՈԿՈՆՎԵՐՍԻԱ» ասոցիացիան

Ջրվեժ ավանի պահեստից վաճառում են կենսահունուս:
Մեծաքանակ գնորդների համար սահմանված է 20 տոկոս զեղչ:
Վճարը [illegible]
Հեռախոսներ՝ 27-81-91, 58-04-26, 58-54-27, 56-83-31:

«Ա[illegible]Ա» ասոցիացիան

կազմակերպում է կոմերցիոն չվերթներ

ԵՐԵՎԱՆ-ՔԻՇԻՆԵՎ-ԵՐԵՎԱՆ
երթուղով

Կազմակերպում է նաեւ Բուլղարիա եւ Ռումինիա տուրիստական ուղերթներ.
Երեւան, Անի հյուրանոց 306 սենյակ: Հեռ. 52-92-57, 594-306:

«ԼՈՒՅՍ-90»

«ԼՈՒՅՍ-90» գրավաճառը գրավի [illegible] վճարում է կանխիկ դրամ ամենաբարձր տոկոսներով, օրական 1 տոկոս:
Գրավաճառը երաշխավորում է բոլոր տեսակի գործողությունների հասակությունը եւ ծգրիտ ժամանակ:
Հեռախոս: 77-79-40
Աշխատում է ամեն օր, ժամը 11-16-ը, հանգստյան օրերը կիրակի:

[illegible] ՍԵՊԱՍՏԻԱՅԻ 78 (ՔԱՂԱՔ ՌՈՍՏՈՎԻ ՍՈՒՆ, ՏՐԱՆՍԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՆԻՆ)

KILIKIA TOUR

Դուք ուզում եք այցելել Գերմանիա՞:
«ԿԻԼԻԿԻԱ-ՏՈՒՐ» ընկերությունը տալիս է այդ հնարավորությունը:
Ընդամենը 250 $ եւ 50000 ռուբլով կղաստրասվեն Ձեր երթի փաստաթղթերը. մինչեւ 16 տարեկան երեխաների համար անվճար:

ԴԻՄԵՔ ՄԵԶ ԵՎ ՄԵԿ ԱՄՍԻՑ ԴՈՒՔ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԵՔ:

Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց, 7-րդ հարկ, 730 սենյակ
հեռ. 58-11-10, 59-43-70

Լուրերի Հոսք

Վրաստանում ափսեավարձը բարձրացվեց 30 տոկոսով

Հունիսի 1-ից Վրաստանում ափսեավարձը բարձրացվեց միջին հաշվով 30 տոկոսով, երկրի հեռուստատեսությանը տված հարցազրույցում կիրակի օրը հայտնեց վարչապետ Թենգիզ Սիգուան: Հանրապետության բնակիչները, բացի դրանից, փոխհատուցում կստանան էլեկտրաէներգիայի եւ բնական գազի սակագների ենթադրվող բարձրացման դիմաց: Վրաստանում այժմ նվազագույն ափսեավարձը կկազմի 3000 կուպոն, (պաշտոնական 1 կուպոնը հավասար է 1 ռուբլու, «սեւ շուկայում»՝ 2 ռուբլու): Փոխհատուցումը կկազմի 1500 կուպոն: Թ. Սիգուան խոստովանեց, որ ափսեավարձի 30 տոկոս բարձրացումը «անշուշտ, միայն է, սակայն այսօր անհնար է ավելին անել»: ԻԴ

Էմիրությունները 1992 թ. ներմուծել են 268 տ ոսկի

Արաբական Միացյալ Էմիրությունները միայն 1992 թ. ներմուծել են 268 տոննա ոսկի՝ ծուլակերների եւ արտադրանքի տեսքով, հաղորդել է եգիպտական «Օկտոբեր» հանդեսը: Նույն ժամանակաշրջանում Սաուդյան Արաբիան հարեւանային տոկոսում գնել է 135 տոննա ոսկի: Հետաքրքրական է, որ բուն Սաուդյան Արաբիայի տարածքում ամեն տարի արտադրվում է ոչ ավելի, քան 10 տոննա ոսկի, գրում է հանդեսը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՍԱՅ-ՏԱՍՍ

Կասետակերների երեք խմբեր վերամշակում են Ուկրաինան

Լավատեղյակ աղբյուր վկայակոչելով, «Միջազգային գաղտնաս» հունիսի 2-ի համարում գրում է. «Ուկրաինայում ներկայումս նկատվում է կասետակերների 3 խումբ. ուկրաինական, արեւմտյան եւ ուկրաինա-արեւմտյան: Ազդեցության ոլորտների գծով վերջինս տիրապետող է դարձել: Դրա գործունեությունը հիմնված է [illegible] [illegible] Ինչպես գտնում է [illegible] եւ [illegible] Օ[illegible] [illegible] տերերի 40 եւ [illegible] մոտ 90 [illegible]

Վիկ. Միրզայանի դատավարության [illegible] գնահատականներ

[illegible] Վիկ. Միրզայանը, որին մեղադրում են մասնակցում Ռուսաստանի [illegible] [illegible] տեղեկությունների հրապարակման համար, գտնում է, որ իր դատավարությունը տարբերվում [illegible] ոչ երեւույթին «աշնան մոտերը»: Երեքշաբթի օրը [illegible]ի ասուլիսում նա հայտնեց, որ իր գործի նախաքննությունն ավարտվել է: ԻԴ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ԱՍՐՅԱՆ ԱՍՐՅԱՆ / 562863

Apple® Macintosh®
հնգալեզվային տարածք
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ծեւավորումն եւ տարանջատումները հեղինակ ՊԵՏՐ ԴԱԼԼԱՔՅԱՆ

[illegible] խմբագրական խորհուրդ

[illegible] «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Աբովյանեան 2

Գրանցման թիվ 65. Դասել 69149. Տիրաժ 36 000. Պատվեր 1521 Ստորագրված է տպագրության՝ 1.6.1993

digitised by A.R.A.R.@